Ազգ
Azg
10 ՓԵՏՐՈՒԱՐ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 22(4641)
ISSN: 1829-1651
9 771829 165003 11022

# Ցեղասպանությանը նվիրված միջոցառում՝ Ֆրանսիայի Ազգային ժողովում

**Ֆրանսիայի Ազգային ժողովում փետրվարի 7-ին տեղի է ունեցել Հայոց ցեղասպանության մասին օրենքի ընդունման 10-ամյակին նվիրված միջոցառում, որին մասնակցել են Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավորներ, սենատորներ, Ֆրանսիայի մտավորական շրջանակների ներկայացուցիչներ: Այս մասին տեղեկացանք ԱԳՆ մամուլի, տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից: Միջոցառման նախաձեռնողն էր Ազգային ժողովի «Ֆրանսիա-Հայաստան» բարեկամական խմբի փոխնախագահ, ԱԺ վարչական եւ ֆինանսաբյուջետային հարցերով խորհրդարանական բյուրոյի ղեկավար, իշխող «Միություն հանուն ժողովրդական շարժման» (UMP) կուսակցության անդամ, Բուշ-դյու-Ռոնի դեպարտամենտից պատգամավոր ընտրված Ռիշար Մալյեն: Հանդիսությանը բացման խոսքով հանդես է եկել Ֆրանսիայի Ազգային ժողովի «Ֆրանսիա-Հայաստան» բարեկամական խմբի նախագահ, ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի փոխնախագահ, կառավարող կոալիցիայի մաս կազմող «Նոր կենտրոն» կենտրոնամետ աջ կուսակցության անդամ Ֆրանսուա Ռոշբլուանը: Նա գնահատել է տասնամյա վաղեմության իրադարձությունը եւ կարեւորել Հայոց ցեղասպանության ժխտման դեպքում քրեական պատիժ սահմանող օրինագծի՝ Ֆրանսիայի Սենատում առաջիկայում ընդունվելու հանգամանքը:**

**Հանդիսավոր միջոցառմանը հանրագումարային եւ վերլուծական ելույթներով հանդես են եկել ֆրանսիացի այլ պատգամավորներ, ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչներ: Միջոցառման ավարտին ամփոփիչ խոսք է ասել Հայաստանի դեսպան Վիգեն Չիտեչյանը:**

# Սաակաշվիլի. «Խաղաղությունը հակամարտությունների կարգավորման միակ միջոցն է»

## *ԵԱՀԿ Մինսկի խումբը կարո՞ղ է սա հասցնել Ալիեւ կրտսերին*

2008-ի օգոստոսին մի քանի օր տեւած պատերազմը հարավօսական տարածքում թվում էր, թե Կովկասում առանձնակի ոչինչ չփոխեց առ այն, որ Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունները չդադարեցին: Պատերազմը սկսելու սեփական պատասխանատվությունը չընդունող Վրաստանի նախագահի պարագայում էլ տպավորությունն ամբողջանում էր այն իմաստով, որ անգամ զոհերը ոչ մեկին հիմք չեն դառնում վերանայելու իրենց դիրքորոշումները:



Երկուսուկես տարի անց Միխեիլ Սաակաշվիլին մյունխենյան անվտանգության քաղաքականության հարցերով համաժողովում շատ հետաքրքրական հայտարարություններ արեց, որոնք թեեւ չեն կարող դիտարկվել որպես Սաակաշվիլու պրոպագանդիստական մտադրություններից դուրս իրողություն, սակայն հստակ է, որ գոնե հարեւան Ադրբեջանում Սաակաշվիլու դառը փորձից արված եզրակացություններին պետք է ուշադրությամբ հետեւեն, եթե ոչ՝ ուղղակի հետեւեն:

Նախ, վրացական լրատվամիջոցները մեջբերում են Սաակաշվիլու մյունխենյան ելույթից, հստակորեն ընդգծելով, որ, Վրաստանի նախագահի խոսքերով, «խաղաղությունը հակամարտությունների կարգավորման միակ միջոցն է»: Ավելին, Սաակաշվիլին գերմանական լրատվամիջոցներին հայտարարել է, թե «յուրաքանչյուր շփում լավ է առճակատումից»:

Այսօր, սակայն, Ադրբեջանի համար օգոստոսյան պատերազմը, որ խաթարել էր իրավիճակը ողջ տարածաշրջանում, որեւէ կերպ դաս չի ծառայում: Ռազմատենչ հայտարարությունները շարունակվում են, շարունակվում են նաեւ ղարաբաղյան հարցն այլ ատյաններում կամ այլ ձեւաչափերով քննարկելի դարձնելու նախաձեռնությունները, որոնց առնչությամբ բարձրաձայն եւ առանց հայտարարությունների իր դժգոհությունն է հայտնում անգամ ԵԱՀԿ Մինսկի խումբը:

Այդ առնչությամբ վերջին օրինակն էլ, որին անդրադարձել էր «**Ազգը**», վերաբերում էր Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում ԼՂ հարցով ենթահանձնաժողովի վերականգնման ԵԽԽՎ բյուրոյի որոշմանը:

Այդուհանդերձ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, որ ենթահանձնաժողովի վերականգնման փորձերի առնչությամբ դժգոհություն են հայտնել, այս օրերին տարածաշրջանում են: Երեկ համանախագահներ Բեռնար Ֆասիեն (Ֆրանսիա), Ռոբերտ Բրադկեն (ԱՄՆ), Իգոր Պոպովը (Ռուսաստան) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը հանդիպել են նախ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ, ապա՝ նաեւ երկրի նախագահ Սերժ Սարգսյանի:

Ըստ ԱԳՆ հաղորդագրության, հանդիպմանը կարեւորվել է 2010 թ. դեկտեմբերի 1-ին ԵԱՀԿ Աստանայի գագաթաժողովում ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ ընդունված հնգակողմ հայտարարությունը: Նաեւ հանդիպմանն անդրադարձել են հունվարի 24-ին Մոսկվայում կայացած Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի արտգործնախարարների հանդիպման արդյունքներին:

Այսօր համանախագահները կլինեն նաեւ Բաքվում՝ Հայաստանից հեռանալով առանց որեւէ մեկնաբանության:

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Զյունիկ Աղաջանյանը՝ Նիդեռլանդներում ՀՀ դեսպան

Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով **Զյունիկ Աղաջանյանը** նշանակվել է Նիդեռլանդների Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Հաագա): Այս մասին հայտնեցին երկրի ղեկավարի մամուլի գրասենյակից:

# Բաքուն չի կողմնորոշվում՝ բավարարվա՞ծ է, թե՞ ոչ

**Դիվանագիտության մեջ եւ ընդհանրապես արտաքին քաղաքականության առնչությամբ հայտարարությունների հակադրությունները, ավելին, չհամընկնելը, միշտ վկայում են, որ այդ առումով դեռեւս հստակ չէ դիրքորոշումը կամ էլ հայտարարություն անողներից մեկն առնվազն ստում է:**

**Այն ժամանակ, երբ Ադրբեջանի նախագահը եւ ոչ միայն նա, տարբեր առիթներով հայտարարում են, թե «աշխարհը սատարում է Ադրբեջանի դիրքորոշմանը ղարաբաղյան հակամարտության հարցում», առավել ցածր մակարդակում ու թերեւս ավելի անկեղծ վրդովմունքով Ադրբեջանի նախագահի հասարակական-քաղաքական հարցերով բաժնի ղեկավարը դժգոհում է աշխարհի մեծերից:**

**«Միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի հանդեպ ճնշում չի նկատվում», «Թրենդ» գործակալության տեղեկացմամբ, հայտարարել է Ալի Հասանովը: Նրա խոսքերով, Ադրբեջանը բավարարված չէ ղարաբաղյան հակամարտության առնչությամբ միջազգային կազմակերպությունների մոտեցմամբ: «Ոչ ԵԱՀԿ-ն, ոչ էլ ՆԱՏՕ-ն կամ Եվրամիությունը ճնշում չեն գործադրում Հայաստանի վրա», հայտարարել է Հասանովը:**

**Ա. Հ.**

# Ձերբակալվել է մանկապղծության մեջ մեղադրվողը

Ըստ Հայաստանի գլխավոր դատախազության հաղորդագրության՝ հարուցված քրեական գործի շրջանակում ձերբակալվել է Սերոբ Տեր-Պողոսյանը: ԱԱԾ քննչական վարչության վարույթում հարուցվել է քրեական գործ՝ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածի հատկանիշներով: Նյութերի նախապատրաստման ընթացքում Լոռու մարզի Ախթալա քաղաքի բնակիչ Վ. Փարսադանյանի հաղորդման հիման վրա պարզվել է, որ Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի գլխավոր տնօրեն Ս. Տեր-Պողոսյանը 2009-2010 թվականների ընթացքում գումարների տրամադրմամբ նյութական օգնություն ցուցաբերելով Ախթալա քաղաքի անչափահաս բնակիչների, դրանով իսկ նրանց նյութական եւ այլ կախվածության մեջ դնելով՝ կոմբինատի վարչական շենքի տարածքում եւ Ախթալա քաղաքում գտնվող իր տանը պարբերաբար հարկադրել է իր հետ սեքսուալ բնույթի գործողություններ ունենալ:

**Մ. Խ.**

# Աստծո շաբաթվա 6-րդ օրը

Երեկ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ քննարկվում էր մի օրինագիծ, որով լրացվում է աշխատանքային օրենսգիրքը, սահմանելով վեցօրյա աշխատանքային շաբաթ մեկ հանգստյան օրով բոլոր այն կազմակերպություններում, որտեղ արտադրության բնույթը կամ այլեւայլ պայմաններ չեն թույլատրում հնգօրյա աշխատանքային շաբաթ կիրառել: 5 աշխատանքային օրը թողնվում է նույնը, բայց նաեւ սահմանվում է 6-րդ օրը այն կազմակերպությունների համար, որտեղ արտադրության բնույթի հետ կապված՝ 5 օր պահպանելը հնարավոր չէ: Այս դեպքում առկա է լինելու արտաժամ աշխատանք՝ օրենսդրությամբ կարգավորվող ու արտաժամ աշխատանքի համար սահմանված վճարով: Այսինքն՝ դեռ մի քանի ամիս առաջ ընդունված 5-օրյա աշխատանքային շաբաթ, 40-ժամյա աշխատանք սահմանող օրինագծին այսօր ավելանում է օրենսդրորեն սահմանված եւ 40 ժամն անցնելիս արտաժամ վճարումը, գործատու-աշխատող փոխհամաձայնությամբ 6-րդ օրվա աշխատանքը: Այս փոփոխությունը քննադատող խորհրդարանական ընդդիմությունը խնդրին նայում է աշխատողներին շահագործելու եւ գործատուների կամայականությունները օրինականացնելու դիտակետից, մանավանդ առանց օրենքի էլ Հայաստանում գործատուների կողմից աշխատանքային 40-ժամյա շաբաթվա խախտումներ եւ աշխատողներին շահագործելու բազմաթիվ փաստեր են արձանագրվում:

**Մ. Խ.**

# Թուրքիան ներկա է. մնում է գուշակել՝ որպես հակամարտության կո՞ղմ, թե՞ միջնորդ

**Միջազգային ճգնաժամային խումբը հրապարակել է հերթական զեկույցը: Այն կոչվում է «Ադրբեջան եւ Հայաստան. պատերազմի կանխումը»: Զարմանալի է, որ ՄՃԽ-ն «պատերազմի եւ խաղաղության» խնդիրը դիտարկել է բացառապես Ադրբեջանի եւ Հայաստանի կտրվածքով, երբ կա հակամարտության երրորդ կողմ՝ ԼՂ-ն, կայացած պետություն, որի դիրքորոշումն, ի վերջո, կարող է բախտորոշ լինել:**

**Միայն այս փաստը բավական է, որ ՄՃԽ-ն կորցնի «անկողմնակալ վերլուծաբանական հաստատության» համարումը եւ ընկալվի իբրեւ քաղաքականացված կառույց, որը որոշակի շահեր է սպասարկում:**

**Դիտարժան է նաեւ այն հանգամանքը, որ ՄՃԽ եվրոպական ծրագրերի տնօրեն Սաբինա Ֆրայզերը, որը նախկինում գլխավորել է կովկասյան ուղղությունը, անդրադառնալով զեկույցին, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, ասել է. «Բանակցություններում առաջընթացի բացակայությունը մեծացնում է ամեն պահի պատահական պատերազմի կամ տոտալ հարձակողական գործողությունների հավանականությունն առաջիկա տարիներին: Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Թուրքիան եւ Եվրոպական միությունը պետք է նման սցենարի կանխումը համարեն բացառիկ առաջնահերթ խնդիր»:**

**Ռուսաստանը, Միացյալ Նահանգները եւ Եվրոպական միությունը՝ ի դեմս Ֆրանսիայի, ԵԱՀԿ Մխ համանախագահության ձեւաչափով միջնորդություն են իրականացնում՝ նպատակ ունենալով հասնել խաղաղ կարգավորման: ՌԴ, ԱՄՆ եւ Ֆրանսիայի նախագահներն արդեն երկու անգամ հանդես են եկել համատեղ հայտարարությամբ եւ մասնակիորեն գաղտնազերծել ղարաբաղյան կարգավորման հայեցակարգը՝ սկզբունքների եւ մի քանի տարրերի մասով, ինչպես նաեւ բանակցող կողմերին կոչ են արել հաղթահարել առկա տարաձայնությունները եւ ձեռնամուխ լինել խաղաղության համապարփակ պայմանագրի մշակման աշխատանքներին:**

**Այդ գործընթացներում Թուրքիան պաշտոնապես ներգրավված չէ: Ճիշտ է, Թուրքիան ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ է, բայց բոլորի համար էլ կարծես ակնհայտ է, որ ղարաբաղյան կարգավորման հարցով Մինսկի խորհրդաժողով հազիվ թե գումարվելու լինի: Պատճառն այն է, որ այդ խորհրդաժողովը ծրագրվում էր հրավիրել, որպեսզի որոշվի ԼՂ միջազգայնորեն ընդունելի կարգավիճակը, բայց այսօր այդ մասին ոչ ոք չի խոսում: Բացի դրանից էլ, Մխ անդամ են նաեւ մի շարք այլ երկրներ, թեկուզ եւ Բելառուսը, բայց ՄՃԽ եվրոպական ծրագրերի տնօրենը Մխ համանախագահների եւ Թուրքիայի համար «նման սցենարի կանխումը բացառիկ առաջնահերթ խնդիր» է համարել:**

**Այս կերպ ՄՃԽ-ն ընդունել եւ կարեւորել է Թուրքիայի կամ ներգրավվածությունը միջնորդական ջանքերում, կամ խիստ շահագրգռվածությունը, կամ հակամարտության կողմ լինելը:**

**Թուրքիան կողմերի միջեւ միջնորդություն չի իրականացնում: Բայց Թուրքիան շահագրգռված է ղարաբաղյան կարգավորմամբ՝ որպես Ադրբեջանի մերձավորագույն դաշնակից: Ուստի նրան ՌԴ-ի, ԱՄՆ-ի եւ Եվրոպական միության հետ նույն շարքում դասել չի կարելի: Կամ, հակառակ տրամաբանությամբ, պիտի ընդունել, որ պաշտոնական միջնորդ երկրներից առնվազն մեկն էլ կարգավորման գործընթացում առավել մոտ է Հայաստանին, ինչը իրականության հետ կապ չունի:**

**Թերեւս կարելի է ենթադրել, որ Թուրքիային նշելով միջնորդների շարքում, ՄՃԽ-ն ուղղակի այդ երկրի վրա պատասխանատվությո՞ւն է դրել: Այսինքն՝ «պատերազմի կանխումը ոչ միայն համանախագահ երկրների, այլեւ Թուրքիայի պարտքն է»:**

**Բայց դա էլ իր հերթին նշանակում է, որ ՄՃԽ-ն ընդունում է, որ Թուրքիան կարող է նաեւ պատերազմ սադրել: Առնվազն՝ հովանավորել, որպեսզի Ադրբեջանը «պատերազմ սկսի»: Այսինքն, ՄՃԽ-ն հրապարակայնացրել է այն, ինչ ենթադրելի էր: Եվ գուցե դրանով իսկ ՄՃԽ-ն նաեւ բացահայտել է Թուրքիայի հավակնությունները:**

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

ԱԶԳ

Ընթացիկ

# Չի բացառվում, որ մինչեւ ապրիլի 24-ը հանրապետականները 252-րդ բանաձեւը մտցնեն մեծ օրակարգ



Երկու ամսից քիչ ավելի մնաց ապրիլի 24-ին, իսկ սա նշանակում է, որ, ի դեմս ԱՄՆ-ի, ամբողջ աշխարհում կվերսկսվեն հայ-թուրքական լոբբիստական պատերազմները: Ի տարբերություն հայկականի՝ թուրքական լոբբիստական կազմակերպությունները՝ կոնգրես ԱՄՆ-ում, ըստ երեկ ասուլիսի հրավիրված թուրքագետ, «**Ազգ**»-ի մեկնաբան **Հակոբ Չաքրյանի**, հզոր չեն: «Այդ բոլոր կազմակերպությունները կոորդինացնում է այսպես կոչված «Թուրքական ֆորում» կազմակերպությունը: Սակայն եթե դրանք հզոր ու ազդեցիկ լինեին, ապա լոբբիստական գործունեություն իրականացնելու համար չէին վարձի այլ կազմակերպությունների», նկատեց Չաքրյանը: Թուրքագետը չբացառեց, որ այս տարի, իր խոսքերով, «միջնորդավորված գործող» թուրքական լոբբիստական կազմակերպությունները չկարողանան խոչընդոտել Կոնգրեսի ընտրություններում հաղթանակ տարած հանրապետականներին՝ օրակարգ մտցնելու Հայոց ցեղասպանությունը ճանաչող 252-րդ բանաձեւը. «Չի բացառվում, որ բանաձեւը հանրապետականները մտցնեն օրակարգ, քանի որ վերջիններս միշտ էլ սերտ հարաբերություններ են ունեցել Իսրայելի ու հրեական կազմակերպությունների հետ», ասաց Չաքրյանը: Հաշվի առնելով, որ Թուրքիա-Իսրայել հարաբերություններում լարվածությունը դեռ շարունակվում է, առաջանում է նաեւ Անկարայի վրա ազդելու լծակների անհրաժեշտությունը, իսկ Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւը, Չաքրյանի մեկնաբանմամբ, հենց «այդ հուժկու լծակներից» է.

«Ստացվում է, որ եթե Թուրքիան ցանկանա կասեցնել բանաձեւի ընթացքը, ապա մի բան պետք է զիջի, ըստ որում՝ զգալի բան», ընդգծեց թուրքագետը՝ հավելելով, որ, այնուամենայնիվ, հայերիս համար էլ նպաստավոր է Ցեղասպանության բանաձեւը, թեկուզ առանց հաստատելու, Կոնգրեսի օրակարգում պահելը, քանի որ այդ պարագայում հարցը ստանում է մեծ հնչեղություն համաշխարհային քաղաքական դաշտում եւ ԶԼՄ-ներում:

Չաքրյանը անդրադարձավ նաեւ վերջերս Շվեդիայի կառավարության պաշտոնական կայքի հետ կապված իրադարձությանը: Հիշեցնենք՝ անցյալ տարի սկանդինավյան այդ երկրի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, եւ այս տարվա հունվարի 27-ին (Հոլոքոսթի հիշատակման օրը) Շվեդիայի ինտեգրացիայի նախարարը իր ելույթում հիշատակել էր նաեւ հայերի ցեղասպանությունը՝ ասելով, որ Հիտլերի համար օրինակ է ծառայել հենց հայերի ցեղասպանությունը: Այնուհետեւ շվեդական կառավարության պաշտոնական կայքում նախարարի ելույթից այս մասը հանվել էր. «Տվյալներ կան, որ սա Շվեդիայի վարչապետի անձնական նախաձեռնությունն է, փոքրիկ ժեստ՝ Թուրքիային, որի ղեկավարության հետ շվեդ վարչապետը շփումներ ունի», ասաց Չաքրյանը: Ընդգծելով, որ այս փաստը չի կարող ունենալ լուրջ հետեւանքներ, թուրքագետն ասաց. «Ես չեմ կարծում, որ եթե որեւէ երկիր պաշտոնապես հայտնի ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, ելնելով Շվեդիայի վարչապետի այս քայլից՝ կանգ կառնի»:

Ինչ վերաբերում է ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում հայկական կազմակերպությունների աշխատանքին՝ ի նպաստ Ցեղասպանության միջազգային ճանաչման, ապա, Չաքրյանի կարծիքով, այդ աշխատանքները կոորդինացված չեն, չկա ընդհանուր ծրագիր: Իսկ թե այս գործում որքանո՞վ նպաստավոր կարող է լինել երկպալատ խորհրդարանի ստեղծումը, բանախոսը պատասխանեց. «Հավանաբար դրական ազդեցություն կունենա, բայց թե ինչպե՞ս պետք է կազմավորվի այդ նոր պալատը, դեռ պետք է հստակեցվի: Բացի դրանից, դեռ հարց է՝ խոսե՞լ են արդյոք այս նախաձեռնության հեղինակները սփյուռքի ներկայացուցիչների հետ, մանավանդ հաշվի առնելով, որ տարբեր երկրներում հայկական համայնքները էականորեն տարբերվում են միմյանցից»:

Հ. Ա.

# Օսկանյանը խոսում է քաղաքական մենաշնորհներից

**Զգիտենք՝ պատահականություն է, թե զուգադիպություն, բայց Ռոբերտ Քոչարյանից հետո երեկ խոսեց նաեւ Վարդան Օսկանյանը, իհարկե, շատ համար՝ «Լրատվամիջոցներ. ինչպե՞ս աշխատել նեղ պայմաններում» թեմայով «Սիվիլիթասի» կազմակերպած քննարկմանը: Թեման հարմար է եղել քաղաքական հետեւություններ անելու համար՝ այն է, տեղեկատվության դաշտում բիզնես դաս չի ձեւավորվում, բիզնեսն այդ ոլորտում թելադրող չէ, այլ՝ իշխանությունն է թելադրում. «Ինչո՞ւ է իշխանությունը դա անում. որովհետեւ այսօր կա քաղաքական մենաշնորհ: Եթե չլիներ քաղաքական մենաշնորհ, իշխանությունը չէր կարող իր կամքը թելադրել հեռուստաընկերություններին»: Նա նկատել է, որ հաջորդ ընտրություններում պետք է հասնել նրան, որ Հայաստանում քաղաքական մենաշնորհը վերացվի. «Եթե յուրաքանչյուր քաղաքական ուժ, հեռուստատեսություն ունի կամ չունի, կամ առանձին, կամ ինչ-որ դաշինքներով իրեն տեսնի որպես հակակշիռ այսօրվա իշխող կուսակցությանը, ես կարծում եմ, որ ինչ-որ բան կարող է փոխվել իսկապես», ասել է մեր նախկին արտգործնախարարը, որն իր պաշտոնավարման ժամանակ ամենեւին չէր նեղվում քաղաքական մենաշնորհներից:**

Մ. Խ.

# Բացահայտվել են զինծառայող Գեւորգ Կոսինյանին սպանած երեք անձինք

**Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ներկայացմամբ՝ օրեր առաջ ԼՂ հարավարեւմտյան հատվածում տեղակայված զորամասերից մեկում տեղի ունեցած դժբախտ պատահարը, երբ մահացել էր ժամկետային զինծառայող Գեւորգ Կոսինյանը, հետեւանք է միջանձնային հարաբերությունների խախտման, վիճաբանության եւ ծեծկռտուքի:**

**Սեյրան Օհանյանի փոխանցմամբ, հարուցվել է քրեական գործ, բացահայտվել են հանցագործություն կատարած երեք անձինք: Նախարարը խոստանում է՝ քրեական գործի քննությամբ մեղավորները կպատժվեն:**

**«Յուրաքանչյուր արտակարգ պատահարի ժամանակ նշանակվում է հրամանատարական, ծառայողական քննություն, իրավապահ մարմիններն էլ սկսում են իրենց գործողությունները: Չի եղել որեւիցե դեպք, արտառոց պատահար, որ չարձանագրենք ու համապատասխան որոշումներ չընդունենք՝ սկսած բացահայտումով, վերջացրած պատժի եւ տույժի կիրառմամբ», ի պատասխան ԱԺ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի հարցադրման՝ ասաց նախարարը ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ:**

**«Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Անահիտ Բախշյանին էլ հետաքրքրում էր, թե Հայաստանի Հանրապետական ու «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների կազմակերպած բժշկական բարեգործական ակցիաներն ովքեր են ֆինանսավորում:**

**«Հայաստանի շրջաններում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության իրականացրած բժշկական բարեգործական ակցիաներն իրականացվում են «Էրեբունի» բժշկական կենտրոնի ֆինանսավորմամբ, այսինքն՝ իմ միջոցներով», ասաց առողջապահության նախարար Հարություն Քուշկյանը:**

**Նախարարը հավելեց, որ նման ակցիաները բխում են սոցիալապես անապահով խավերի շահերից ու չեն իրականացվում պետական բյուջեի հաշվին:**

**«Բարգավաճ Հայաստան» կուսակցության կազմակերպած բարեգործական ակցիաները բացառապես իմ միջոցներով են իրականացվում», պնդեց Քուշկյանը: Հիշեցնենք, որ նա «Էրեբունի» եւ «Նաիրի» բժշկական կենտրոնների սեփականատերն է:**

**Դաշնակցական Ռուզան Առաքելյանի հարցն էլ վերաբերում էր գազի թանկացմանը: Հիշեցնենք, որ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի վարչության նախագահի տեղակալ, «Գազպրոմ»-ի Մերձավոր Արեւելքի արտերկրների հետ աշխատանքի վարչության պետ Անատոլի Պոդմիշալսկին Հայաստանում հայտարարել էր, որ 2011թ. ապրիլի 1-ից Հայաստանում գազի գինը շուկայական մակարդակով է լինելու, ինչը նշանակում էր, որ գազի գինը կրկին բարձրանալու է:**

**«Կա նախագահի հանձնարարական, որ Հայաստանում էներգակիրների գնի բարձրացում չլինի, եւ բանակցությունների միջոցով պետք է ուղիներ փնտրվեն, որպեսզի այդ հանձնարարականը կատարենք», ասաց էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը: Թե ինչ բանակցություններ են ընթանում գազի գնի դեմն առնելու համար՝ պատգամավորի հարցին նախարարն ասաց. «Ամենամեծ հնարավորությունը բանակցությունների արդյունքն են, թե ինչքանո՞վ հնարավոր կլինի զսպել գները: Իսկ եթե գազի գինը բարձրանա, ապա տարբեր տարածաշրջանային սխեմաների մեջ մտնելով պետք է փորձենք ինչ-որ ձեւով զսպել բարձր գնի ազդեցությունը», ասաց նախարարը՝ հավելելով, որ փետրվարի վերջին արդեն պարզ կդառնա, թե որքան է բարձրանալու գազի գինը:**

Հ. Հ.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՄՈՒԼ

# Հայտարարություն

**Փետրվարի 7-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանի դատարանը, մասամբ բավարարելով «Հայկական ժամանակ» օրաթերթի դեմ ԱԺ մի խումբ պատգամավորների հայցը եւ թերթին ֆինանսական մեծ փոխհատուցում պարտադրելով, մեկ ավելորդ անգամ եւս ապացուցում է, որ դատարանները Հայաստանում ընդամենը իշխանության ձեռքի գործիք են, իսկ իշխանությունն էլ փորձում է լռեցնել ազատ տպագիր մամուլը՝ նմանեցնելով այն տարիներ շարունակ ձեռնասուն դարձած անդեմ ու անորակ հեռուստաեթերին:**

**«Հայկական ժամանակն» ընդամենն իր աղբյուրի վրա հղում անելով «վիրավորված» պատգամավորների մասին տեղեկատվություն էր տարածել: Ավելին՝ տեղեկատվության աղբյուր հանդիսացող անձը բազմիցս հրապարակավ հայտարարել է պարզաբանումներ տալու իր պատրաստակամության մասին, բայց դատարանը՝ իր առաջ իշխանությանն անհաճո թերթին պատժելու հանձնարարություն ունենալով, կայացրեց պահանջվող վճիռը:**

**ՀՀ իշխանությունը, ելնելով իր բնույթից, չի կարողանում հանդուրժել ազատ խոսք ու ամեն ինչ արել ու անելու է այն ճնշելու համար: «Իրավունքի եւ ազատության կենտրոն» ՀԿ գտնում է, որ «Հայկական ժամանակ» օրաթերթի դեմ կայացված այս դատավճիռն իրականում դատավճիռ է հայաստանյան յուրաքանչյուր ազատ թերթի ու լրատվամիջոցի դեմ եւ կոչ է անում ՀՀ-ում գործող հասարակական ու քաղաքական կազմակերպություններին, իրավապաշտպաններին, ՀՀ քաղաքացիներին անկախ իրենց քաղաքական հայացքներից ու նախապատվություններից, իրենց ձայնը բարձրացնել հօգուտ «Հայկական ժամանակի»՝ դրանով պաշտպանելով Հայաստանում ազատ մամուլի ու ազատ խոսքի գոյության իրավունքը:**

ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Իրավունքի եւ ազատության կենտրոն» ՀԿ նախագահ, իրավապաշտպան

ՀՀ-ԵՄ

# Մուտքի արտոնագրերի տրամադրման կարգի դյուրացման բանակցությունները շուտով կսկսվեն

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Եվրոմիության վիզաների գծով փորձագիտական առաքելությանը Դաֆնի Գոգոուի գլխավորությամբ: Հանդիպմանը մասնակցել է Հայաստանում Եվրոմիության պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ դե Լյուցենբերգերը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ մուտքի արտոնագրերի տրամադրման կարգի դյուրացման գործընթացի նախապատրաստական աշխատանքներին առնչվող հարցեր:

Եվրոպացի փորձագետները նշել են, որ բանակցությունները Հայաստանի հետ շուտով կմեկնարկեն: Գործընթացը կծավալվի հետեւյալ փուլերով՝վիզային ռեժիմի դյուրացման համաձայնագրի նախնական տարբերակի ներկայացում Հայաստանի իշխանություններին, թերեւս 3-4 փուլից բաղկացած բանակցություններ, համաձայնագրի տեքստի շուրջը վերջնական համաձայնության ձեռքբերում եւ երկկողմ վավերացում:

ԵՄ-ի հետ մուտքի արտոնագրերի դյուրացման համաձայնագրերը դյուրին եւ արագացված ընթացակարգեր կսահմանեն պաշտոնական պատվիրակությունների, գործարար շրջանակների, ուսանողների, գիտաշխատողների, լրագրողների, միջազգային սպորտային միջոցառումների մասնակիցների, ազգականներին այցելողների եւ այլ անձանց համար:

Ընդգծելով, որ ԵՄ-ի հետ մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացումը մեծապես կնպաստի ԵՄ-ի անդամ երկրների հետ տարբեր ուղղություններով կապերի զարգացմանը՝ Արթուր Բաղդասարյանը հաստատել է հայկական կողմի պատրաստակամությունը՝ ըստ ամենայնի աջակցել նախապատրաստական աշխատանքների իրականացմանն ու բանակցություններին, որպեսզի Հայաստանը հնարավորինս արագ եւ արդյունավետ անցնի այդ գործընթացը:

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ

# Անօրինական որս կատարողները կտուգանվեն մինչեւ 200.000 դրամով

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում խստացվել է անօրինական ձկնորսության պատասխանատվությունը: Արդարադատության նախարար Հրայր Թովմասյանի ներկայացմամբ, օրենսգրքի վերանայման հիմնական նպատակը ձկնային պաշարների ու կենդանիների պաշտպանության արդյունավետության բարձրացումն է: Նրա գնահատմամբ, անօրինական ձկնորսության եւ որսորդության աճ է նկատվում:

2010-ին անօրինական ձկնորսության եւ որսորդության թիվը նախորդ տարվա համեմատությամբ կրկնապատկվել է. անցյալ տարի գրանցվել է 100 դեպք:

Այժմ անօրինական ձկնորսության եւ ջրային որսորդության համար տուգանքը կազմում է 30.000-50.000 դրամ, իսկ պաշտոնատար անձանց համար՝ 50.000-80.000 դրամ: Համաձայն օրենսգրքում կատարվող ուղղումների՝ տուգանքը ենթադրվում է հասցնել 50.000-ից 100.000 դրամի, իսկ պաշտոնատար անձանց համար՝ 100.000-ից 200.000 դրամի:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԷՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Երեկ Իրանի՝ Երեւանում եւ Բաքվում գտնվող դեսպանների համար լրիվ տարբեր իրադարձություններ կատարվեցին: Եթե Բաքվում Իրանի դեսպան Մամեդբաիիր Բահրամին «պատուհանից հետեւում էր», թե ինչպես Իրանի դեսպանատան առջեւ բողոքի ցույց են անում շուրջ 100 ադրբեջանցիներ, որոնք ամբաստաններ են հասցեագրել Իրանին, անվանել վերջինիս «մարդասպանների հովանավոր» (նկատի ունենալով հայերիս - Հ. Ա.) եւ սպառնալով, որ կստեղծեն «Թավրիզ կենտրոնով միասնական Ադրբեջան», ապա Երեւանում Իրանի դեսպան **Սեյեդ Ալի Սաղայանը** մամուլի ասուլիսում հաղորդեց, որ մոտ օրերս Երեւան կժամանի նախագահ Ահմադինեժադը: Ի դեպ, «Ահմադինեժադի բարեկամությունը Սարգսյանի հետ ցույց է տալիս Իրանի մահմեդական ֆանատիզմի իրական դեմքը» արտահայտությունը նույնպես վանկարկում էին Բաքվում Իրանի դեսպանատան առջեւ հավաքված ցուցարարները, որոնց, ի վերջո, ոստիկանները բռնի ուժով ցրել են, մեկին՝ ձերբակալել:

# Թեհրանն ու Մոսկվան «միանման ստանդարտներ»-ի կողմնակից

Ինչեւէ, հանուն տարածաշրջանային ընդհանուր անվտանգության, հույս հայտնենք, որ Իրանն ու Ադրբեջանն ի վերջո կհաղթահարեն իրենց տարաձայնությունները՝ մեղմ ասած, եւ նշենք, որ Երեւանում Իրանի դեսպանն իր խոսքում մի քանի անգամ փաստորեն հակադարձեց Բաքվին: Այսպես, Ադրբեջանն ամենուր հայտարարում է, որ ԼՂ հակամարտության հիմքը կրոնական է, մինչդեռ Ալի Սաղայանի խոսքերով. «Բոլորն էլ գիտեն, որ Իրանի դիրքորոշումն այդ մասին հստակ է: Մենք չենք կարծում, որ հակամարտությունն ունի կրոնական բնույթ, եւ կարծում ենք, որ Ադրբեջանի իշխանություններն էլ այդ մասին լավ գիտեն»:

Բացի սրանից, երեկ Ադրբեջանի նախագահի աշխատակազմից Ալի Հասանովը հերթական անգամ դժգոհություն հայտնեց միջազգային հանրությունից, քանի «որեւէ ճնշում չի գործադրվում Հայաստանի վրա, եւ սպառվում է Բաքվի համբերությունը»: Թե ի՞նչ է ակնարկում Հասանովը, ակնհայտ է, հստակ է նաեւ միջազգային հանրության ներկայացուցչի, Երեւանում Իրանի դեսպանի «պատասխանը» նրան. «Ես այն կարծիքին եմ, որ տարածաշրջանը՝ Ռուսաստանը, Իրանը, Թուրքիան, ինչպես նաեւ Եվրոպան ու ԱՄՆ-ը թույլ չեն տա, որ պատերազմ լինի Հայաստանի եւ Ադրբեջանի կամ Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ: Վստահեցնում եմ, որ Իրանն այդ հարցի օժանդակության առումով իրենից կախված ամեն ինչ կանի», նշել է Սաղայանը:



Երրորդ հարցը, որին «վիրտուալ առումով» միմյանց հետ համաձայն չեն Բաքուն ու Թեհրանը, տարածքային ամբողջականության եւ ժողովուրդների ինքնորոշման իրավունքների իրավահավասարության հարցն է: Ինչպես գիտենք, Բաքուն երբեմն «մոռանում» է նշել, որ տարածքային ամբողջականությունից բացի՝ միջազգային իրավունքն ունի այլ սկզբունքներ նույնպես:

Դեսպան Սաղայանը, սակայն, եւս մեկ անգամ բարձրաձայնեց Իրանի պաշտոնական դիրքորոշումը այս հարցում. «Նախագահ Ահմադինեժադն ինչպես Բաքվում, այնպես էլ Ստամբուլում պարզորոշ ասաց, որ բոլոր հակամարտությունները, այդ թվում՝ ղարաբաղյանը, պետք է լուծվեն խաղաղ բանակցությունների ճանապարհով: Միեւնույն ժամանակ մենք կարծում ենք, որ ժողովրդի ինքնորոշման իրավունքը փոքր-ինչ ավելի բարձր է տարածքային ամբողջականության իրավունքից: Չպետք է անտեսել մարդու իրավունքը, որի շնորհիվ էլ Հարավային Սուդանում մարդիկ հանրաքվեի մասնակցեցին եւ իրենց «կողմ» քվեն տվեցին անկախությանը: Բացի սրանից, երբ Պաղեստինի Գազայի հատվածն ամբողջովին փակված էր, մենք տեսանք, որ այնտեղ ընտրություններ տեղի ունեցան, սակայն ԱՄՆ-ը չընդունեց այդ ընտրությունը: Ամեն ինչ պետք է լուծվի խաղաղ բանակցությունների եւ արդարության սկզբունքներով»: Ի դեպ, բոլոր հակամարտությունների վերաբերյալ միանման ստանդարտների կիրառման կարեւորության մասին վերջերս խոսեց նաեւ Աբխազիան եւ Հարավային Օսիան ճանաչած ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը:

Հավելենք նաեւ, որ Սաղայանի խոսքերի համաձայն, մոտ օրերս Ահմադինեժադի Երեւան այցին կհետեւի նախագահ Սարգսյանի պատասխան այցը Թեհրան, որտեղ ՀՀ նախագահը Իրանի նախագահի հյուրերի ցուցակում է, որոնք կմասնակցեն «Նովրուզի» միջոցառումներին: Նախատեսվում են նաեւ խորհրդարանների խոսնակների եւ այլ պաշտոնատար անձանց փոխայցելություններ:

Կրկին զուգահեռաբար նշենք, որ երեկ Բաքու ժամանեց Իրանի սահմանային ոստիկանության ղեկավար, գեներալ Հուսեյին Զուլֆուգարին: Ինչպես փոխանցում է «ԱՊԱ»-ն, «Իրանցի գեներալի այցի ընթացքում քննարկվել են երկկողմ դժվարին հարցեր՝ սահմանային գոտու վերաբերյալ: Այսպիսի հանդիպումներ լինում են պարբերաբար: Բացի սրանից՝ Զուլֆուգարին ադրբեջանցի գործընկերի հետ խոսել է նաեւ Կասպից ծովի անվտանգության համակարգի վերաբերյալ»:

Ի դեպ, ըստ նրան հրավիրող Ադրբեջանի պետական սահմանային ծառայության հրամանատար, գեներալ-լեյտենանտ Էլչին Գուլիեւի խոսքերի. «Ես Իրանցի իմ գործընկերոջ հետ քննարկել եմ նաեւ տարածաշրջանի այլ երկրների վերաբերյալ հարցեր»: Գուլիեւը չի մանրամասնել՝ կոնկրետ ո՞ր երկրների վերաբերյալ: Զուլֆուգարին Բաքվում հանդիպումներ կունենա նաեւ Ադրբեջանի բարձրաստիճան ղեկավարության հետ:

Հ. ԱՓՅԱՆ

# Մետրոյի ուղեվարձը կթանկանա

## Առաջիկայում մետրոյից օգտվելու համար կվճարենք 100 դրամ

**Այսօր Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ քվեարկության կդնի ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ներկայացրած 2010 թ. օգոստոսի 10-ին Երեւանում ստորագրված ՀՀ-ի եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ «Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցում-առաջին փուլ» ֆինանսական պայմանագիրը:**

**Համաձայն այդ պայմանագրի՝ 15 մլն եվրո կտրամադրվի մետրոյի վերանորոգման համար:**



**Առաջին փուլում կվերանորոգվեն մետրոպոլիտենի շարժակազմը, մաշված ուղեգծերն ու էլեկտրամատակարարման բաղադրիչները, կնորացվեն պոմպակայանները՝ ջրի ներհոսքի խնդիրը մեղմելու համար: Ջրի ներհոսքը նախատեսվում է վերջնականապես լուծել ծրագրի երկրորդ փուլի ժամանակ. այն կսկսվի 2013-ից: Նախատեսվում են կատարել նաեւ դրենաժային աշխատանքներ: Մետրոյի նոր կայարան ստեղծելու հարցն այս ծրագրի շրջանակներում չի քննարկվում:**

**«Շարժակազմերն ու ռելսերը հնամաշ են: Դեռեւս 90-ականներից դրանց ամորտիզացումը զրոյական արդյունավետություն ունի: Դա նշանակում է, որ դրանց օգտագործումը մեծ ռիսկեր է պարունակում: Մենք դա պետք է անհապաղ փոխենք», Ազգային ժողովում ասաց ՀՀ ֆինանսների փոխնախարար Վարդան Արամյանը:**

**Նրա մեկնաբանությամբ՝ այս պահին մետրոյից օգտվելու ռիսկեր կան, սակայն դրանք վտանգավոր չեն:**

**Փոխնախարարը չբացառեց, որ վերանորոգման աշխատանքներից հետո կրկնակի կբարձրանա մետրոյի սակագինը: «Պարզ հաշվարկ կատարենք: Ի՞նչ արժեր 50 դրամը 2002թ. եւ ինչ արժե հիմա, համարյա թե զրո է, եթե հաշվի առնենք՝ օրինակ, գնաճը: Պահանջը դրված է, որ ուղեվարձի գնի բարձրացում պետք է լինի առաջիկա 2-3 տարվա ընթացքում՝ մոտ 100 տոկոսով», ասաց Արամյանը:**

**Դա նշանակում է, որ ներկայիս 50 դրամի փոխարեն մետրոյի ծառայություններից օգտվելու համար կվճարենք 100 դրամ: Մինչդեռ մետրոն ամենամատչելի ու ամենաարագ փոխադրամիջոցն է, եւ մետրոյից օգտվողների թիվը մայրաքաղաքում գերազանցում է մի քանի տասնյակ հազարը:**

**Փոխնախարարի փոխանցմամբ, ուղեվարձի միանգամից կամ մասմաս բարձրանալը կորոշի Երեւանի մետրոպոլիտենը:**

**«Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի մեկնաբանությամբ սա հերթական գումարներ լվանալու մեխանիզմ է պարունակում որոշ պաշտոնյաների համար: Պատգամավորը կասկած հայտնեց, որ տրամադրվելիք գումարը կծառայի ճիշտ նպատակին:**

Հ. Հ.

# Պետությունը տույժեր կվճարի գերավճարը ուշացնելու դեպքում

Կառավարության այսօրվա նիստի օրակարգում է գերավճարների հետ վերադարձն ուշացնելու դեպքում տույժերի վճարման կարգի մասին որոշման նախագիծը, որը կներկայացնի ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը: Այսինքն, կառավարությունը սրանով պարտավորվում է գերավճարների հետվերադարձն օրենքով սահմանված ժամկետից 90 օրվանից ավելի ուշացնելու դեպքում տնտեսվարողներին վճարել տույժեր, ճիշտ այնպես, ինչպես տնտեսվարողներից են գանձվում տույժեր հարկային վճարումներն ուշացնելու համար: Այս որոշման համաձայն, մինչեւ 2011-ի հունվարի 1-ը առաջացած եւ օրենքով սահմանված ժամկետներում չվերադարձված կամ չհաշվանցված գերավճարների նկատմամբ հաշվարկման ենթակա տույժերի հաշվառումն առաջին անգամ կատարվելու է մինչեւ 2011-ի մայիսի 1-ը:

Նախատեսվում է, որ տույժերի հաշվարկը շարունակվելու է այնքան ժամանակ, քանի առկա է գերավճար եւ (կամ) գերավճարից տարբերվող գումար, որը չի վերադարձվել օրենքով սահմանված ժամկետին հաջորդող 90 օրվա ընթացքում: Տույժերը հաշվարկվելու են հարկ վճարողի յուրաքանչյուր դիմումին համապատասխանող՝ օրենքով սահմանված ժամկետին հաջորդող 90 օրվա ընթացքում չվերադարձված գումարի համար առանձին: Տույժերի վճարումը գանձապետական հաշիվներով իրականացնում է գանձապետարանը՝ տույժերի գումարը փոխանցելով հարկ վճարողի բանկային հաշվին: Այն դեպքերում, երբ հարկ վճարողը չունի բանկային հաշիվ, գումարը փոխանցվում է հարկ վճարողի առաջարկած առեւտրային բանկ՝ ֆիզիկական անձի անձնագրային տվյալներով:

Տարածքային հարկային մարմինը, բյուջետային հաշվի քաղվածքների հիման վրա, համապատասխան հարկատեսակի համար վարվող հարկ վճարողի անձնական հաշվի քարտում կատարում է հարկ վճարողին վճարված կամ այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցված տույժերի ձեւակերպում:

Այս նախագծի նպատակը, ըստ կառավարության ներկայացրած հիմնավորման, հարկման արդարության սկզբունքի կիրառումն է՝ հաշվի առնելով միատեսակ հարաբերությունները նույն սկզբունքներով կարգավորելու անհրաժեշտությունը:

Ա. Մ.

# Վարդան Այվազյան. WikiLeaks-ի հրապարակումը հիմարություն է. Ես կաշառք չեմ վերցրել

**Բնապահպանության նախկին նախարար, այժմ տնտեսական հարցերով մշտական խորհրդարանական հանձնաժողովի ղեկավար Վարդան Այվազյանը «Ազգ»-ի հետ զրույցում հերքեց WikiLeaks-ում հրապարակված տեղեկատվությունը, որ նա կաշառք է պահանջել Global Gold Corporation-ից ոսկու հանքերի մշակման արտոնագիր ստանալու համար:**

**WikiLeaks-ը օրեր առաջ հրապարակել էր 2005-2007 թթ. Հայաստանում ԱՄՆ դեսպանության Էնդրյու Գոդֆիրի դիվանագիտական հաղորդումները, որտեղ նա նկարագրում է այն դժվարությունները, որոնց բախվել է Հայաստանում Global Gold Corporation (GGC) ոսկի արդյունահանող միջազգային ընկերությունը: Համաձայն հրապարակված տեղեկության, GGC-ից մեծ կաշառք են ուզել հանքերի մշակման արտոնագիր տրամադրելու համար:**

**«Գիտեմ այդ հրապարակման մասին: Նախ՝ տեղեկատվությունը մասնակի է, երկրորդ՝ տվյալ հարցով ես դեռեւս մի քանի տարի առաջ բազմիցս ներկայացրել եմ իմ դիրքորոշումը: WikiLeaks-ի հրապարակումները պարզապես հիմարություն են: Դրանք չեն համապատասխանում իրականությանը: Ես որեւէ մեկից կաշառք չեմ վերցրել», ասաց նա:**

**Այվազյանի մեկնաբանությամբ՝ ընդերքը պետական սեփականություն է: Բնապահպանության նախարարը միայն վերահսկում է իրավիճակը:**

**Նախկին նախարարի խոսքով՝ GGC-ի հարցով կան բոլոր փաստաթղթերը: «Կան փաստաթղթեր, արձանագրություններ: Անհրաժեշտության դեպքում դրանք կրկին կհրապարակվեն: GGC-ի վերաբերյալ փաստաթղթերը դիտարկվել են, եւ հանքավայրն աճուրդով մշակման է փոխանցվել»:**

**Այվազյանի փոխանցմամբ, WikiLeaks-ը հրապարակում է դեսպանների՝ ԱՄՆ պետդեպարտամենտին հասցեագրված նամակները, սակայն իր վերաբերյալ տեղեկատվությունը կիսատ է հրապարակվել: «Չի նշվել նամակի այն մասը, որտեղ ասվում է, որ կաշառքի մասին տեղեկատվություն տարածած անձը վստահություն չի ներշնչում: Բացի դրանից՝ ինչո՞ւ ես պետք է ուրիշի համար կաշառք ուզեի, ուզելուց լինեի, ինձ համար կուզեի: Դա աբսուրդ է եւ իրականությանը չի համապատասխանում»:**

Հ. Հ.

ԱԶԳ

## Հայ եկեղեցի

# Հայկական երկու պատրիարքությունները` երկու գլխավոր մարտահրավերներ

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Հայկական եկեղեցին չորս նվիրապետական կենտրոններ ունի. Սուրբ Էջմիածնի կաթողիկոսություն եւ գերագույն պատրիարքություն, Անթիլիասում Կիլիկիայի կաթողիկոսություն եւ երկու պատրիարքություններ Երուսաղեմում ու Ստամբուլում:

Հաշվի առնելով հայկական եկեղեցու կարեւորությունը եւ դերը մեր պատմության ամբողջ ընթացքում, տրամաբանական պիտի լիներ այս չորս նվիրապետական կենտրոնները դասել անձնական կամ խմբակային շահերից վեր, որպեսզի եկեղեցին կարողանա շարունակել իր առաքելությունը մեր այս տագնապալից ժամանակներում: Բայց քանի որ հայերս հիմնականում կորցրել ենք կենտրոնանալու մեր կարողությունը այն ամենի նկատմամբ, ինչը կարեւոր է, եւ ոչ կարեւոր, մեր կոլեկտիվ վերապրումի եւ հարատեւման համար, ապա թույլ ենք տալիս, որ անձնական եւ խմբակային շահերը վտանգի ենթարկեն այդ կրոնական կենտրոնների դերն ու նշանակությունը:

Ներկայումս Սբ Էջմիածնի եւ Անթիլիասի միջեւ հաշտությունը հեռավոր երազանք է եւ այդպես հավանաբար մնա գոնե մինչեւ կանխատեսելի ապագան: Մյուս կողմից, Երուսաղեմի եւ Ստամբուլի պատրիարքությունները, որոնք նույնպես իրենց պատմական դերակատարությունն են ունեցել իրենց համապատասխան տարածքներում, ճգնաժամային մի դժվարին շրջան են թեւակոխել, եւ անմիաբան ու մասնատված սփյուռքն ի վիճակի չէ օգնելու այդ երկու գլխավոր կառույցներին` շարունակելու իրենց կենսական առաքելությունները: Երկու պատրիարքներն էլ, տարբեր պատճառներով, անկարողունակ են դարձել առաջ տանելու իրենց պարտականությունները եւ ենթարկվում են անհատական կամ հատվածային շահեր հետապնդողների քմահաճույքներին:

Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանը, ի վերջո գիտակցելով իր առաջացած տարիքի հարկադրական սահմանափակումները, հրավիրել է Սուրբ Հակոբյանց միաբանության անդամներին` ընտրելու աթոռակից պատրիարք: Հուսով ենք, որ խոհեմությամբ առաջնորդվելով` մինչեւ այս տարվա մարտի կեսերը այդ պաշտոնում կընտրվի ամենահարմար թեկնածուն:

Երուսաղեմի պատրիարքությունը իր ներքին օրենքներով ու կանոնադրությամբ է առաջնորդվում, եւ արտաքին ոչ մի ուժ կամ կառույց չի կարող խառնվել միաբանության գործունեությանը կամ ազդեցություն ունենալ նրա որոշումների վրա: Ստեղծված այս համակարգը, անշուշտ, պաշտպանում է միաբանությանը արտաքին միջամտություններից, սակայն միաժամանակ խանգարում է նրա թափանցիկությանը (մի երեւույթ, որ քանիցս կրկնված է), ճանապարհ հարթելով որոշ անսկզբունքային կղերականների առաջ` դրսեւորելու նենգավոր վարքագիծ:

Ստամբուլի պատրիարքությունը բոլորովին այլ կառուցվածք ունի եւ ներկայումս լուրջ ճգնաժամի առաջ է կանգնած պատրիարք Մեսրոպ Մութաֆյանի անբուժելի հիվանդության պատճառով:

Անգամ ցեղասպանությունից հետո թուրքական իրավահաջորդ կառավարությունները շարունակել են ճնշել, ոչնչացնել եւ սեփականազրկել փոքրամասնություններին եւ մասնավորապես հայկական համայնքին, խախտելով 1923 թվի Լոզանի պայմանագրի դրույթներով իրենց ստանձնած պարտավորությունները:

Տարիներ շարունակ Թուրքիայի հայ համայնքի ներկայացուցիչները ստիպված են եղել հանդուրժել ամեն տեսակի ստորացումներ եւ սպառնալիքներ` հաստատված կանոնադրությանը դեմ չգնալու եւ ի վիճակի լինելու հայկական եկեղեցիներում սոսկ մի պաս ներկելու կամ մի ճաք վերանորոգելու համար: Թուրքական իշխանությունները այնքան են խրված հայկական համայնքի կյանքում, որ խոչընդոտում են ամեն տեսակի միջոցառում կամ նախաձեռնություն: Հետեւաբար, երբ պատրիարք Մութաֆյանը անկարողունակ դարձավ շարունակելու իր պարտականությունները, թուրքերը հրաշալի մի հնարավորություն եւս ստացան առաջ տանելու համայնքի քայքայման իրենց քաղաքականությունը:

Պատմականորեն հայկական համայնքի գործերը կարգավորվել են 1863-ին օսմանյան սուլթանի վավերացրած «Ազգային սահմանադրության» դրույթներով: Բայց այդ սահմանադրությունն այժմ` առավել «ժողովրդավարական» հանրապետական վարչակարգի օրոք այլեւս չի գործում:

Որեւէ լուրջ նախաձեռնություն, ինչպես օրինակ` նոր պատրիարքի ընտրությունը, այսօր կախված է գործադիր մարմինների քմահաճույքներից: Նրանք կարող են ամեն օր մի նոր օրենք հորինել եւ հաջորդ օրը խախտել այն:

Անշուշտ, պատրիարք Մութաֆյանի պարագան առավել բարդ իրավիճակ ստեղծեց` թույլ տալով թուրքական իշխանություններին սեպ խրել համայնքի զավակների միջեւ:

Բոլոր գործնական առումներով պատրիարքի աթոռը դեռեւս թափուր է: Գոյություն ունեցող հոգեւոր խորհրդին առընթեր ստեղծված է ընտրությունների կազմակերպման եւ անցկացման մի կոմիտե, եւ այս երկու կառույցները կառավարությանն են դիմել տարբեր թույլտվություններ ստանալու համար:

Քաղաքակիրթ երկրներում ապրող ժողովուրդների համար ուղղակի անհասկանալի է, թե ինչու որեւէ երկրի կառավարություն պիտի այդքան խորամուխ լինի փոքրամասնության կրոնական հարցերի մեջ: Բայց Թուրքիան, լինելով «ժողովրդավարական» պետության տիպար մի օրինակ, այս ձեւով է վերահսկում փոքրամասնությունների կյանքը:

Ընտրությունների կազմակերպման նախաձեռնող կոմիտեն կառավարությանն է դիմել նոր պատրիարք ընտրելու թույլտվություն ստանալու համար: Իսկ հոգեւոր խորհուրդը` պատրիարքի աթոռակից ընտրելու համար: Սա հրաշալի առիթ էր թուրքական իշխանությունների համար մի խումբը մյուսի դեմ հանելու: Եվ «ընտրվեց» մի տեղապահ, որին միայն պատրիարքն իրավունք ուներ նշանակելու: Արամ արք. Աթեշյանը հարկադրել էր հոգեւոր խորհրդի անդամներին, որոնք պարտական են իրեն իրենց ապրուստը վաստակելու իմաստով, «ընտրել» իրեն որպես տեղապահի:

Հայկական համայնքը Թուրքիայում իրարանցումի մեջ է` փորձելով սահմանել «պատրիարքի տեղապահ», «պատրիարքի ժամանակավոր պաշտոնակատար» եւ «աթոռակից» եզրերը: Դրանցից երկրորդը` «ժամանակավոր պաշտոնակատարը», ընտրովի պաշտոն է, երբ պատրիարքի աթոռը թափուր է: «Աթոռակիցը» նույնպես ընտրովի պաշտոն է, երբ պատրիարքը անկարողունակ է լինում շարունակելու իր պարտականությունները:

Հարթ ձեւով իրեն այդ պաշտոնում «ընտրելով» կամ «ընտրել տալով»` արքեպիսկոպոս Աթեշյանը երկու մյուս թեկնածուներին` Բեկչյան արքեպիսկոպոսին եւ Չուլջյան եպիսկոպոսին փաստորեն շրջանցեց, առաջացնելով նրանց զայրույթը: Աթեշյանի «ընտրությունը» ներկայումս վիճարկվում է դատարաններում, իսկ նրա հոգեւոր կոչումը` հայ համայնքում: «Ակօս» շաբաթաթերթը, օրինակ, մի նյութ է տպագրել, որտեղ Աթեշյանը, օգտագործելով պատրիարքի լիազորություններն ու (ֆինանսական) միջոցները, ձեռք է բերել բավական մեծ մի կալվածք` որպես «փոխհատուցում իր կատարած ծանր աշխատանքի»:

Թվում է, թե Աթեշյան արքեպիսկոպոսը իդեալական թեկնածու է թուրքական իշխանությունների համար: Նա պատրաստ է ընդառաջ գնալ նրանց ցանկություններին եւ քմահաճույքներին` թողնելով հայկական համայնքը իրարանցման մեջ:

Բայց միայն համայնքը չէ, որ անհանգիստ ու շփոթված վիճակում է: Վերջերս, ի նշան բողոքի, հրաժարական տվեց վերստուգիչ հանձնաժողովը, թողնելով արքեպիսկոպոս Աթեշյանին իր կամքով վարելու պատրիարքարանի գործերը:

Առավել սթափ ու լուրջ մտածողներ կոչ են անում հանգստության ու միասնականության, որպեսզի հնարավոր լինի մեկ ձայնով խոսել, մի բան սակայն, որ կարող է երբեք իրականություն չդառնալ, քանի դեռ դրա լծակները գտնվում են թուրքական իշխանությունների ձեռքերում:

**«Արմինյն միրոր սփեքթեյթր»**
**Թարգմ. Հ. Ծ.**

## ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Ի պատասխան փորձագետի դիտարկումների

**News.am գործակալության կայքէջում ընթերցեցի «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի նախագահ, Religions.am կայքի խմբագիր Ստեփան Դանիելյանի վերագրումները Հայ եկեղեցուն` «Եկեղեցին Հայաստանի ամենաավտորիտար կառույցն է» խորագրի ներքո: Ես փորձագետ չեմ, բայց եկեղեցի այցելում եմ, մասնակցում եկեղեցական արարողություններին, մոմ վառում, հնարավորինս հետեւում Հայաստանի հոգեւոր կյանքի իրադարձություններին եւ զարգացումներին: Եվ անձնական փորձառությունից եւ գիտելիքներից ելնելով` չեմ կարող համաձայնել Ստ. Դանիելյանի մտքերին:**

**Նախ ինձ զարմացրեց Դանիելյանի այն միտքը, որ «եկեղեցու առողջության համար» պետք է հստակեցնել «կաթողիկոսի ընտրությունների ձեւավորման մեխանիզմը»: Ի գիտություն Ս. Դանիելյանի ուզում եմ հայտնել, որ կաթողիկոսի ընտրության ընթացակարգը վաղուց ի վեր հստակ է, որին ծանոթանալու համար, գոնե այսօր, բավականաչափ գրականություն կա: Իսկ եթե Ստ. Դանիելյանը այլ մեխանիզմներ ու կարգ է ուզում սահմանել, ապա դա հաստատ այլ եկեղեցու համար է:**

**Ինձ զարմացնում է նաեւ Ստ. Դանիելյանի այն պնդումը, թե եկեղեցին ստվերային կառույց է, եկեղեցու գործունեությունը թափանցիկ չէ: Ի՞նչ թափանցիկություն է ակնկալում Ստ. Դանիելյանը Հայ եկեղեցուց: Չեմ կարծում, որ Հայաստանում, առավելաբար հասարակական եւ կրոնական դաշտում, կա մեկ այլ ավելի բաց կառույց, քան Հայ եկեղեցին: Գոնե ինքս հաճախ եմ հանդիպել թերթերում ժամանակ առ ժամանակ հրապարակվող հարկատուների, սոց. վճարումներ կատարողների ցանկերում Մայր աթոռի անվանը` այն էլ ոչ վերջին տեղերում:**

**Անշուշտ, եկեղեցին համազգային կառույց է, որ գոյատեւում է անհատ բարերարների եւ ժողովրդի կամավոր նվիրատվություններով եւ եկեղեցին էլ երբեւիցե չի թաքցնում, թե ինչպես է գոյանում իր «բյուջեն»: Կարծում եմ` խոշոր այն բարերարները, որոնք այսօր կանգնած են եկեղեցու կողքին, տեղեկություններ ունեն իրենց նվիրաբերած միջոցների մասին: Իսկ ինձ նման մեկը, որ երբեմն կարողությունների սահմանում գումար է գցում գանձանակի մեջ կամ մոմ վառում, չի էլ ակնկալում, որ եկեղեցին հաշվետու լինի դրա համար: Ինձ համար դա իսկապես երկրորդական է, քանի որ տեսնում եմ, թե ինչքան ծրագրեր են իրականացվում Էջմիածնում:**

**Իսկ թե եկեղեցին անձեռնմխելի է, թե ոչ, տարբեր կերպ կարելի է ընկալել: Հարգելի Ստ. Դանիելյան, ուզեք թե չուզեք, եկեղեցին կարեւոր անբաժանելի տարրն է վերջերս բավականին չարչրկված մեր ազգային ինքնության, եւ նկատի ունենալով մեր ինքնությանը հասցվող բոլոր հարվածները, այս առումով, այո, եկեղեցին անձեռնմխելի է:**

**Եվ վերջում` շատ պիտի ցանկանայի, որ «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի նախագահը, Religions.am կայքի խմբագիրը, այս ամենը նկատի առնելով, նույնքան թափանցիկություն պահանջեր այլ կրոնական կազմակերպություններից, որոնք վխտում են մեր կյանքում, աջ ու ձախ ծախսում հսկայական գումարներ` սնվելով ժողովրդին այդպես էլ անհայտ աղբյուրներից: Երբեւէ չեմ հանդիպել ձեր ելույթներում որեւէ ակնարկի այդ առնչությամբ: Գուցե դա ձեռնտու չէ ձեր գլխավորած կառույցի հարատեւությա՞ն համար: Այլ բան, ցավոք, չեմ կարող եզրակացնել ձեր միակողմանի քննադատություններից:**

ԱՌԱՔԵԼ ՄԵՍՐՈՊՅԱՆ

# Ազգային ժողովի երկրորդ պալատ ստեղծելու առաջարկի վերաբերյալ

**Հարգելի խմբագիր,**

**«Ազգ»** թերթի փետրվարի 3-ի համարում զետեղված է տեղեկություն առ այն, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Սանոսյանն է այն անձնավորությունը, որ 2009 թ. հունիսին առաջին անգամ առաջ է քաշել բացառապես սփյուռքահայերից կազմված ՀՀ Ազգային ժողովի երկրորդ պալատ ստեղծելու գաղափարը, ինչը, մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը:

Այդ գաղափարը եւ դրա հետ կապված Հայաստանի Հանրապետությունը հռչակել Ամենայն հայոց պետություն, արտահայտվել է մեր կողմից դեռեւս 2000 թ. եւ դրանից հետո մինչեւ 2009 թ. բազմիցս: Եվ որպես ապացույց ստորեւ նշում ենք մեր համապատասխան հրապարակումները, այդ թվում եւ իր օբյեկտիվությամբ աչքի ընկնող **«Ազգ»** թերթի էջերում:

1. Ստրատեգիական նոր մոտեցում Հայրենիք-Սփյուռք կապերին, «Խորհրդային Հանրապետություն», 11 հունվարի 1990 թ.:

2. Армения должна стать государством всех армян, считает доктор исторических наук, профессор, член-корреспондент НАН Армении Николай Оганесян. Интервью, «Голос Армении», 27 октября 2007г., с. 1, 3:

3. Հայաստան-Սփյուռք հարաբերությունների վերանայումը Հայաստանի եւ հայության ազգային անվտանգության ամրապնդման ռազմավարության տեսանկյունից. նոր մոտեցումներ, **«Ազգ»**, 19 ապրիլի, 2008 թ., էջ Ա., Բ, Դ:

4. Ստեղծել համասփյուռքյան կառույց, **«Ազգ»**, 20 հուլիսի, 2008 թ., էջ 2:

Այդ հարցերի վերաբերյալ 2007 թ. հանդես եմ եկել եւ համապատասխան առաջարկություններ կատարել նաեւ ՀՀ Ազգային ժողովում, մասնավորապես նրա գիտության հարցերի հանձնաժողովում:

Այդ ուղղությամբ իմ կատարած աշխատանքի ամփոփումը հանդիսացավ «Հայրենիք-Սփյուռք. ինտեգրման ռազմավարական ուղենիշները. հայեցակարգային մոտեցումներ» իմ ծավալուն հոդվածը, որտեղ արտացոլված են իմ մոտեցումները եւ նախորդ տարիներին արտահայտած տեսակետները ՀՀ Ազգային ժողովի երկրորդ պալատի ստեղծման հարցում: Տես` ՀՀ ՊՆ «Աշխատանքային տետրեր», 1-2, 2010, էջ 68-84:

Հարգելի խմբագիր, բնավ նպատակ չունենալով որեւէ կերպ նսեմացնել պատգամավոր Հայկ Սանոսյանի հայտարարության կարեւորությունը, այդուհանդերձ կցանկանայինք հանուն ճշմարտության, համապատասխան ուղղում տալ Ձեր թերթում:

**Հարգանքներով`**
**Պրոֆեսոր**
**ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
**7 փետրվար, 2011**

## Հայտարարություն

Կորել է «Ազաթ» ԱԿՖ ՊՓԲԸ-ի (գրանցման համարը 80.120.00580) կլոր կնիքը: Համարել անվավեր:

**Լուծարման հանձնաժողով**

# Ինչո՞ւ արագացվեց Բրայզայի նշանակումը

Մեթյու Բրայզան, որը չէր թաքցնում, որ անհամբեր է Ադրբեջանում ԱՄՆ դեսպանի պարտականությունների կատարմանն անցնելու, ժամանել է Բաքու: Նախընթաց մեկուկես տարում Միացյալ Նահանգները բավարարվում էր դիվանագիտական ներկայացուցչությունում գործերի ժամանակավոր հավատարմատար ունենալ:

Ադրբեջանական աղբյուրները Բրայզայի նշանակումը համարում են «հայկական լոբբիի պարտություն» եւ ավելացնում, որ նրան Բաքու դիվանագիտական աշխատանքի ուղարկելով՝ Օբամայի վարչակազմն «ընդգծել է Ադրբեջանի կարեւորությունը»: Բաքվում չեն թաքցնում նաեւ, որ ակնկալում են «ղարաբաղյան կարգավորման բանակցություններին ԱՄՆ-ի ավելի եռանդուն ներգրավվածություն», որը, ադրբեջանցի վերլուծաբանների հայացքով, «կարող է նախաձեռնել Մեթյու Բրայզան»:

Նման ակնկալիքները, ինչ խոսք, չափազանցություն են: Նախ, ղարաբաղյան կարգավորման բանակցություններում համանախագահ երկրները ներգրավված են դեսպաններից շատ ավելի բարձր մակարդակով: Երկրորդ, դեսպանը սովորաբար առաջնորդվում է իր երկրի արտաքին քաղաքական գերատեսչությունից ստացած հրահանգներով եւ ոչ թե՝ ընդհակառակը: Երրորդ, ինչպես կարելի է եզրակացնել տեղեկատվական ազդակներից, ընթացիկ տարում էլ բանակցություններում «առաջին ջութակի» դերակատարություն վերապահվում է Ռուսաստանին: Համենայն դեպս, ԵԱՀԿ գործող նախագահ Աժուբալիսը քննարկումներն սկսել է Մոսկվայից, իսկ դա երկրորդական հանգամանք չէ:

Այս ամենից, սակայն, չի հետեւում, թե Ադրբեջանում ԱՄՆ դեսպանի նշանակումը, այն էլ՝ Սենատում հաստատման ընթացակարգի շրջանցմամբ, էական իրադարձություն չէ: Խնդիրն այն է, թե ինչո՞ւ է արագացվել Բրայզայի նշանակումը:

Դա կարող է ունենալ միայն մեկ բացատրություն. Միացյալ Նահանգների կառավարությունն սպասում է ինչ-որ «արտակարգ զարգացումների»:

Հնարավոր է՝ դա կապված է Ադրբեջանի եւ Իրանի հարաբերությունների հետ:

Բանն այն է, որ այդ հարաբերություններն ամենեւին էլ բարիդրացիական համարել չի կարելի: Լարվածությունն ակնհայտ է այն աստիճան, որ Բաքվի քաղաքային իշխանությունները փաստացի արտոնել են ԻԻՀ դեսպանատան մոտ կազմակերպված պիկետը: Իսկ այն առաջնորդել է խորհրդարանի պատգամավոր Սաբիր Ռուստամխանլին: Ադրբեջանցիները բողոքի ակցիա են կազմակերպել նաեւ Անկարայում՝ սեւ պսակ տեղադրելով Թուրքիայում ԻԻՀ դեսպանատան մուտքին: ԱԳՆ պաշտոնական խոսնակ **Էլխան Փոլուխովը** հայտարարել է, որ «Ադրբեջանը պատրաստ չէ վերացնել անցագրային ռեժիմը», չնայած Իրանը միակողմանիորեն վերացրել է: Մի շարք քաղաքական գործիչներ, այդ թվում՝ խորհրդարանի փոխխոսնակ Զիաֆեթ Ասկերովը, Իրանին մեղադրել են «Ադրբեջանի ներքին գործերին միջամտելու» մեջ: Իրանի դեմ կոշտ քննադատություն են հնչեցրել նաեւ ադրբեջանցի՝ հիմնականում իշխանության տեսակետը պաշտպանող քաղաքագետներ եւ վերլուծաբաններ:

Այս լարվածությունը, հնարավոր է, Ադրբեջանի նախաձեռնողականության արդյունք է: Ի վերջո, հազիվ թե Իլհամ Ալիեւը չէր հասկանում, որ իրեն հռչակելով «աշխարհի բոլոր ադրբեջանցիների առաջնորդ», դավագրգռում է Իրանի իշխանություններին, որոնց համար «երկու Ադրբեջանի» թեման շատ զգայուն է մանավանդ ներկա պահին:

Նման իրավիճակում Բրայզան թերեւս Բաքվում կարող է ստվերային մոդերատորի դերակատարություն ստանձնել՝ ըստ անհրաժեշտության նաեւ վերահսկողության տակ պահելով Իրան-Ադրբեջան հարաբերությունների այն մակարդակները, որ առկա են, թեեւ դրանք պաշտոնապես չեն նշագրվում: Խոսքն այն մասին է, որ ադրբեջանական կողմն էլ իր հերթին գտնում է, որ «հիջաբի հարցն արհեստական է, իրականում Թեհրանը փորձում է Ադրբեջանում կրոնապետություն հաստատել»:

Կա խնդրի եւս մեկ առում:

Բաքվում ԱՄՆ դեսպանի նշանակումը ժամանակային առումով համընկնում է Իլհամ Ալիեւի «հակակոռուպցիոն քաղաքականության» հռչակմանը: Ավելի ու ավելի հաճախ է խոսվում կառավարության կազմում հնարավոր կտրուկ փոփոխությունների մասին: Մասնավորապես նշվում է, որ պաշտոնին հրաժեշտ է տալու վարչապետ Արթուր Ռասիզադեն: Համաշխարհային բանկի փորձագետներն, ըստ ադրբեջանական ընդդիմադիր մամուլի, Իլհամ Ալիեւին հորդորել են հեռացնել արտակարգ իրավիճակների նախարար Քյամալեդդին Հեյդարովին: Վերջինս համարվում է Ադրբեջանի կառավարության ամենակոռումպացված անդամը: Նրա անձնական բիզնեսը գնահատվում է 24 միլիարդ դոլարի սահմաններում: Հեյդարովը նաեւ ունի իշխանության «մոսկովյան օրիենտացիայի» պարագլխի համարում՝ ի տարբերություն պաշտպանության նախարար Աբիեւի, որն «Արեւմուտքի մարդն է»:

Վերջին օրերին ադրբեջանական ոչ իշխանական լրատվամիջոցները խոսում են նաեւ «սոցիալական բունտի հավանականության» մասին: Տարեսկզբից Ադրբեջանում կտրուկ աճել են ջրի, երկաթուղային տրանսպորտի եւ փոստային ծառայությունների սակագները: Զգալի գնաճ է արձանագրվել նաեւ պարենային մթերքների շուկայում, անկում է ապրել բնական գազի սպառումը, ինչը եւս սոցիալական ոչ բարվոք իրավիճակի ցուցանիշ է:

Սպասվում է, որ կաճեն նաեւ բենզինի եւ դիզվառելիքի գները: Որոշ վերլուծաբաններ դա պայմանավորում են նրանով, որ ադրբեջանական կողմը Ղրղզստանի հետ համաձայնության է եկել «Մանաս» հենակայանում ամերիկյան ինքնաթիռների լիցքավորումն իրականացնելու հարցում: «Այդ ծավալի բենզին Ադրբեջանը չի կարող արտադրել, ուստի մնում է, որ գործարքն իրականացնի ներքին շուկայում վառելիքի ծավալների կրճատման եւ, բնականաբար, գնաճի հաշվին», գրում է, մասնավորապես, «Ենի Մուսավաթ» թերթը:

Այսպիսով, բավական լարված է նաեւ Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակը: Եվ չի բացառվում, որ Բրայզան շտապ Բաքու է գործուղվել, որպեսզի «Վաշինգտոնը ձեռքը պահի Իլհամ Ալիեւի զարկերակի վրա»:

Հավանական է, այս որոշումն ընդունելիս առաջնային է եղել հատկապես Ադրբեջանի «աշխարհաքաղաքական կողմնորոշումը» վերահսկելու նպատակը: Ըստ երեւույթին, «մտորելու ժամանակը» Վաշինգտոնում համարում են կամ լիովին սպառված, կամ դրան շատ մոտ:

Իսկ դա միայն նշանակում է, որ Միացյալ Նահանգները Բաքվին առնվազը հորդորում է «լինել վճռական եւ վերջնական ընտրություն կատարել»: Բրայզան, ամենայն հավանականությամբ, Իլհամ Ալիեւի կառավարության ենթադրվող փոփոխությունները պետք է հնարավորինս ուղղորդի այնպես, որ Միացյալ Նահանգների ազգային շահերը չվտանգվեն:

Կհաջողվի՞ Իլհամ Ալիեւին եւս մեկ անգամ «չոր դուրս գալ աշխարհաքաղաքական ընտրության թակարդից»՝ ցույց կտա ժամանակը: Այդուհանդերձ, բացառված է, որ Բրայզան դեսպան է նշանակվել, որպեսզի օգնի Ադրբեջանին՝ հաղթահարելու կողմնորոշման երկվությունը: Ընդհակառակը, նա Բաքու է ժամանել միայն մի նպատակով՝ արագացնելու Ադրբեջանի ներգրավվածությունն ԱՄՆ-ի կողմից ենթադրաբար նախածրագրվող գործընթացներում, որոնց կիզակետում դիտվում է Կասպյան ավազանը: Ներառյալ՝ Իրանը եւ Կենտրոնական Ասիայի էներգակիրներով հարուստ երկրները:

Իր այս առաքելությունն «ընդունելի» դարձնելու համար Բրայզան, իհարկե, «ղարաբաղյան կարգավորման բանակցություններում առաջընթացի հասնելու» եւ այլ՝ ադրբեջանական հանրության համար «արտամոտ» թեմաներով խոսել եւ խոսելու է: Բայց փաստ է, որ հատկապես Ադրբեջանի «աշխարհաքաղաքական ընտրության» պահին ԼՂ-ի հարցով բանակցություններում ճեղքում չի կարող լինել:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Ռուսաստանը վերջին անգամ կանցնի ամառային ժամանակի

ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը հայտարարել է, որ երկրում վերացվելու է ձմեռային եւ ամառային ժամանակների հերթափոխությունը: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:

Մեդվեդեւի խոսքերով, 2011-ի աշնանը ռուսաստանցիները ժամացույցի սլաքն այլեւս 1 ժամ հետ չեն տանի: Փաստորեն մարտի 27-ին Ռուսաստանը վերջին անգամ կանցնի ամառային ժամանակի:

Նախագահն իր որոշումը հրապարակել է երիտասարդ գիտնականների եւ գիտության ու նորամուծությունների բնագավառում ՌԴ նախագահի 2010 թ. մրցանակի դափնեկիրների հետ հանդիպման ժամանակ: Նա ավելացրել է, որ ինքը «համապատասխան հանձնարարություն կտա կառավարությանը»:

Ըստ Մեդվեդեւի, ժամափոխության վերացումը օգտակար է լինելու: Նրա խոսքերով, ժամի փոփոխմանը հարմարվելու անհրաժեշտությունը կապված է սթրեսի եւ հիվանդությունների հետ:

Ժամափոխությունը վերացնելու գաղափարը Մեդվեդեւն առաջին անգամ արտահայտել էր 2009-ի վերջերին Դաշնային ժողովում: Նախագահի խոսքերով, նման պրակտիկան տալիս է կասկածելի օգուտներ՝ էական ծախսերի պայմաններում:

Ռուսաստանը ձմեռային եւ ամառային ժամանակների անցնում էր վերջին 30 տարիներին: Տարածված է այն կարծիքը, թե ժամափոխությունը նպաստում է էլեկտրաէներգիայի խնայողությանը:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

# ԱՄՆ-ը Եգիպտոսից պահանջում է վերացնել արտակարգ դրությունը

## *Իսլամիստները 1 շաբաթ են տվել Մուբարաքին*

ԱՄՆ-ը Եգիպտոսի կառավարությանը կոչ է արել անհապաղ չեղյալ հայտարարել արտակարգ դրությունը, դադարեցնել լրագրողների եւ ընդդիմադիրների ձերբակալություններն ու ծեծը: Ամերիկացիների դիրքորոշումն արտահայտել է փոխնախագահ Ջո Բայդենը իր եգիպտացի պաշտոնակից Օմար Սուլեյմանի հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ: Բայդենը նաեւ ասել է, որ Եգիպտոսում անհապաղ պետք է կազմավորվի ավելի լայն աջակցություն վայելող կառավարություն: Այդ մասին հաղորդում է BBC-ն: Գործակալության տվյալներով, Բայդենը գրեթե ամեն օր հաղորդակցվում է Սուլեյմանի հետ:



Արտակարգ դրության օրենքները Եգիպտոսում գործում են վերջին 30 տարիներին, այսինքն՝ Մուբարաքի կառավարման ամբողջ ժամանակամիջոցում:

Ինչ վերաբերում է նախագահ Հոսնի Մուբարաքին, «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական շարժման ղեկավարներից Էսսամ ալ Էրիանը հայտարարել է, որ նախագահը եւ իր մերձավորները մեկ շաբաթ ժամանակ ունեն սեփական լիազորությունները վայր դնելու համար: Այդ մասին հաղորդում է բրիտանական «Գարդիան» թերթը: «Փոխզիջումներ չեն կարող լինել... Մուբարաքի շրջապատը հիմա կարգավորում է սեփական գործերը, քանի որ նա վարչակարգի խորհրդանիշն էր... Նրանց ժամանակ է հարկավոր: Մենք տալիս ենք այդ հնարավորությունը: Մեկ շաբաթ», հայտարարել է ալ Էրիանը: Նա հավաստիացրել է, որ Մուբարաքի պաշտոնաթողության դեպքում «Մուսուլման եղբայրներ» շարժումը կջանա ստեղծել խորհրդարանական լայն կոալիցիա: «Մենք խաղաղ կազմակերպություն ենք: Մենք գործում ենք ըստ սահմանադրության եւ օրենքների», ասել է ալ Էրիանը:

Փոխնախագահ Օմար Սուլեյմանը մերժում է Մուբարաքի ինքնակամ պաշտոնաթողության հնարավորությունը եւ նախընտրում է ելք գտնել երկխոսության միջոցով: Նրա խոսքերով, մյուս մեթոդները կդիտվեն որպես պետական հեղաշրջում:

Human Rights Watch իրավապաշտպանական կազմակերպության տվյալներով, հունվարի 25-ից մինչեւ օրս բողոքի զանգվածային ելույթների եւ բախումների ընթացքում սպանվել է 297 մարդ: Փետրվարի 8-ին «Ջերուզալեմ փոստ» իսրայելական թերթը հրապարակեց բողոքի զանգվածային ելույթների կազմակերպման հետ կապված որոշ մանրամասնություններ:

Պարզվում է, որ Google-ի մերձավորարեւելյան բաժանմունքի գլխավոր կառավարիչ Վաել Գոնիմը մասնակցել է Եգիպտոսում զանգվածային ելույթների կազմակերպմանը: Նրան ձերբակալել էին հունվարի վերջերին եւ 12 օր կալանքի տակ պահելուց հետո ազատ էին արձակել: Դրանից հետո Գոնիմը հեռուստատեսային հարցազրույցում հայտարարել է, որ ինքը Facebook ցանցում իրոք ստեղծել էր հասուկ էջ, որտեղ եգիպտացիներին կոչ էր արել դուրս գալ փողոցներ:

Գոնիմի արձակումը Եգիպտոսում շատերը համարում են իշխանությունների բարի կամքի դրսեւորում, որոնք խոստացել են բանտերից ազատել ընդդիմության զանգվածային ելույթներին մասնակցած մարդկանց:

# «Փաթիր» ուզում է ուրբաթ օրը հեղաշրջում կազմակերպել Գազայում

«Ֆաթհ» շարժումը մտադիր է Facebook սոցիալական ցանցն օգտագործել Գազայի հատվածում հեղաշրջում կազմակերպելու նպատակով: Առաջիկա ուրբաթ օրը Գազա, Ռաֆահ, Խան Յունիս քաղաքներում բազմամարդ ցույցեր են անցկացվելու «Համասի» դեմ:

«Մաարիվ» թերթի տվյալներով, Facebook-ում հայտնվել են Գազայի հատվածի երիտասարդներին ուղղված կոչեր՝ մասնակցելու բողոքի զանգվածային ելույթներին: Նրանք իրենց շարժումն անվանում են «Հարգանքի հեղափոխություն»:

Ինտերնետային կոչերի հեղինակները Եգիպտոսի եւ Թունիսի օրինակները վկայակոչելով գրում են, որ ժողովուրդը կարող է ազդել երկրի իրադրության վրա: Ուստի հարկավոր է Գազայի հատվածում վերջ դնել «Համասի» իշխանությանը: Ցույցերը պետք է սկսվեն ուրբաթօրյա աղոթքից անմիջապես հետո: «Ֆաթհի» ակտիվիստները խոստանում են տուն չգնալ, մինչեւ որ ստեղծվի ազգային միասնության կառավարություն:

# Օբաման վերջնականապես թողել է ծխելը

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման վերջնականապես թողել է ծխելու սովորությունը: Այդ մասին USA Today թերթի թղթակցին հայտնել առաջին տիկին Միշել Օբաման:

Վերջինիս խոսքերով, մոտավորապես մեկ տարի է, ինչ ամուսինը առհասարակ չի ծխում: Օբաման որոշել է վնասակար սովորությունից հրաժարվել իր երկու դուստրերին լավ օրինակ ծառայելու համար: Օբաման ուզում է «նրանց աչքերին նայելով» ասել, որ ինքն այլեւս չի ծխում:

Միշել Օբաման ասում է, որ ինքը հպարտանում է ամուսնու վարքագծով, թեեւ ինքը նրան երբեւէ չի ձանձրացրել ծխելու վնասներին վերաբերող հիշեցումներով:

2008-ի վերջերին՝ նախագահ ընտրվելուց հետո Բարաք Օբաման հրապարակավ խոստացել էր ծխելը թողնել Սպիտակ տուն տեղափոխվելուն պես: Սակայն 2009-ի հունիսին նա խոստովանել էր, որ «երբեմն չի դիմանում» եւ ծխում է, բայց երբեք դա չի անում երեխաների ներկայությամբ:

ՉԵԽԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

# Անդրադարձ «Օրեր» հանդեսի հերթական համարին




Խմբագրության ստացած «Օրեր» հանդեսի վերջին համարը հարուստ է մշակութային էջերով: Հասարակական-քաղաքական բնույթի առաջին էջերի մի քանի հոդվածներին հաջորդում են կինոյի, նկարչության, գրականության, երաժշտության, լուսանկարչության ոլորտի հայ արվեստագետների հետ մի շարք հետաքրքրական հանդիպումներ:

Պրահայի Ռուդոլֆինումի Դվորժակի մեծ համերգասրահում դաշնակահար Վազգեն Վարդանյանի մենահամերգը նվիրված էր Շոպենի 200-ամյակին:

Պրահայի INTER ART CALLERY-ում ցուցադրված, այժմ Չեխիայում բնակվող երեւանցի Գոռ Ավետիսյանն իր կերպարվեստային արտահայտություններում մերձենում է աբստրակտ իմպրեսիոնիզմի ոճին, այս մասին է մեկ այլ հրապարակում:

Աթենքից Հակոբ Ճելալյանի անդրադարձը եգիպտահայ նկարիչ Պետրոս Ասլանյանի արվեստի ուրվագծումների փորձ է: Նրա նկարչությունը ներկայացված է որպես գույնի, շարժման եւ պատկերի ներդաշնակ համադրություն՝ կերպարվեստի գրեթե բոլոր ուղղություններին հարող՝ դասականությունից, իմպրեսիոնիզմ ու ավանգարդիզմ:

Անահիտ Թոփչյանի վերջին՝ «Անհետացում» վեպի գաղափարական-գեղարվեստական արժեւորման իր մոտեցումներն է ներկայացնում գրականագետ Սուրեն Դանիելյանը, մասնավորապես այսպիսի գնահատական տալով. «Անահիտ Թոփչեանի «Անհետացում» վեպը մեր դժուարին կեանքի յուզական ընկալման ճանապարհին ինքնութեան համար կռիւ տալու դեղատոմս է, ճշմարիտ ապրելու բանաձեւ՝ առանց բարձրագոչ արտայայտութիւնների»:Բարբարա Զիբերտի հետ հարցազրույցն անդրադառնում է Էրիկ Ֆրիդլերի Հայոց ցեղասպանությանը նվիրված «Աղետ» ֆիլմի ստեղծման պատմությանը եւ դրա արձագանքներին: Առիթը Յոհաննես Լեփսիուսի՝ Պոտսդամում գտնվող տունը հայ-գերմանական ակադեմիայի ուսումնասիրությունների ու ցուցահանդեսների կենտրոնի վերածելու նախաձեռնությունն է եղել՝ ենթարկված թուրքական ուժեղ հակազդեցությանը: Ֆիլմը ստեղծվել է տարբեր երկրներում պահվող արխիվային բնօրինակ նյութերի հիման վրա, օգտագործվել են նաեւ Եղեռնից վերապրած 9 տարեց մարդկանց հետ Բարբարա Զիբերտի հանդիպման տեսագրությունները: Ֆիլմն ունեցել է տարբեր արձագանքներ՝ թուրքական կողմից, իհարկե, բացասական, գերմանական մամուլը դրվատանքով է արտահայտվել: «Սա կորսված գիծ է, ֆիլմը շատ հստակ եւ քննադատաբար է ցույց տալիս Գերմանիայի դերն այս ողբերգության մեջ»: Իսկ «Օրերը» «Աղետը» հռչակել է տարվա լավագույն ֆիլմ:

Մշակութային հատվածից առանձնանում են երկու հրապարակում՝ ֆրանսահայ կինոռեժիսոր Սերժ Ավետիքյանի հետ Հակոբ Ասատրյանի եւ Ե. Չարենցի գերմաներեն թարգմանիչ Կոնրադ Քուհնի հետ Աննա Կարապետյանի հարցազրույցները:

Արմատներով Արեւմտյան Հայաստանից, միաժամանակ հիշողություններով կապված ֆրանսիականության հետ, Սերժ Ավետիքյանը ծնվել է Երեւանում: 1970-ի դեկտեմբերի 1-ին, իր ծննդյան օրը ընտանիքը բնակության է տեղափոխվում Փարիզ, բեմական կարիերան սկսվում է 9 տարի անց՝ «Կարմիր պուլովեր» ֆիլմով:

Հարցազրույցի հիմնական թեման Կաննի՝ անցած տարվա փառատոնում գլխավոր մրցանակի արժանացած նրա «Շների պատմություն» ֆիլմն է՝ Ստամբուլի 1910 թվականների նկարագրություններով. այն ներկայացնում է եվրոպական կրթությամբ դաստիարակված երիտթուրքերի իշխանության գալու ընթացքում, չափազանց բազմացած փողոցային շներից քաղաքը մաքրելու պատմությունը:

Ռեժիսորը շների այս պատանդը զուգահեռում, մոտեցնում է Հայոց ցեղասպանությանը: Իր կարծիքով, հայերն էին այդ ավելորդը, որ շատ մեծ տեղ էին գրավում իրենց կյանքում, քաղաքներում, տնտեսության մեջ եւ խանգարում էին իրենց ազատությանը... Ֆիլմի հաջողությունը պայմանավորված է, ըստ նրա, ընդհանուր կառուցվածքի, նման թեմատիկ դաժանությունը էսթետիկական ոճի մեջ ներկայացնելու հանգամանքներով:

Ի դեպ, մինչեւ Կաննի փառատոնը, ֆիլմը ցուցադրվել էր Ստամբուլի 4 մասնավոր եւ պետական համալսարաններում, տեղի երիտասարդության հետ հետաքրքրական բանավեճերի առիթ տալով: Ցուցադրվել է նաեւ Անթալիայի միջազգային կինոփառատոնում, ֆիլմի 10.000 օրինակ DVD-ն թողարկվել է դպրոցների աշակերտության համար՝ Թուրքիայի մշակույթի նախարարության համաձայնությամբ: Հարցազրույցի ընդհանուր տպավորությամբ ֆրանսահայ կինոռեժիսորը ինքնատիպ մոտեցումներ ու աշխատանքային ոճ է հանդես բերում՝ ռեժիսուրան միախառնելով գեղանկարչության հետ: Նախապես նկարած վիդեո-հատվածները՝ բնապատկերային, հետագայում ձուլվում են նկարներին: «Ալքիմիան եմ փնտրում, որ դինամիկ լինի, ոչ միայն կոլաժային աշխատանքը: Ես ոչինչ չեմ անում իմ ձեռքով, ես ներկա եմ որպես «դիրիժոր» եւ մոնտաժող»: Նորություն է Սերժ Ավետիքյանի ստանձնած նոր դերակատարումը «Փարաջանով» ֆիլմում, որտեղ նա մարմնավորելու է Սերգեյ Փարաջանովին: Ֆիլմի նախաձեռնությունը ուկրաինական «Ինտերֆիլմ» կինոստուդիայինն է՝ համագործակցությամբ ֆրանսիական, հոլանդական, հայկական ու վրացական կինեմատոգրաֆիստների հետ:

Կոնրադ Քուհնը՝ գերմանացի դրամատուրգ, իր աշխատանքային կենսագրության հաջողությունը համարում է Վիեննայի կայսերական Burgtheater-ում ունեցած տարիները: Հետագայում նա մի շարք օպերային թատրոններում է աշխատել: Մեր ուշադրությունն այստեղ գրավում է հայ քնարերգության նմուշների նրա թարգմանությունները՝ Պաղդասար Դպիր, Նահապետ Քուչակ, Բարսեղ Կանաչյան, Կոմիտաս, իսկ վերջերս՝ Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծական ժողովածուն: (Նա հայ իրականությանը ծանոթ է որպես օպերային հանրահայտ երգչուհի Հասմիկ Պապյանի ամուսին): Հարցազրույցը նրա հետ ներկայացնում է Չարենցի բանաստեղծությունների ընտրության մի շարք սկզբունքներ, որով առաջնորդվել է թարգմանիչը՝ ներկայացնել հայ բանաստեղծի ոճական բազմազանությունը եւ գեղագիտական դավանանքները՝ հայ միջնադարյան եւ համաշխարհային գրականության ավանդույթների չարենցյան զարգացումներն ու անկրկնելի մեկնաբանությունները, ստեղծագործությունների ամբողջականության պահպանմամբ: Գիրքն արժանացել է գերմանական եւ արտերկրի մամուլի ուշադրությանը («Berliner Zeitung», «Ակօս» եւ այլն):

Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի տնօրեն Ռուբեն Խաչատրյանն անդրադառնում է Հայաստանում բնապահպանական մշակույթին եւ իրենց բազմաբովանդակ ու հանրաշահ բազմաթիվ ծրագրերին ու փառատոններին:

Ուշադրության է արժանի հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանի «Սրբալույս մյուռոնի խորհուրդը» հրապարակումը: Այն մի պատմություն է՝ ազդեցիկ, թե ինչպես Էջմիածնում յոթ տարին մեկ օրհնվող մյուռոնը Հայ առաքելական եկեղեցու թեմերին են բաշխում նվիրակները: Ներկայացվում է Հովհաննես եպս Պոնտացու՝ Բասրայից 1762-ին Հնդկաստան կատարած ուղեւորության վտանգավոր, բայց եւ զարմանահրաշ դիպվածները: Նավաբեկությունից հրաշքով փրկված եպիսկոպոսի եւ նրա ուղեկիցների աչքի առաջ 2-րդ հրաշքն է կատարվում. ջրամույն եղած բոլոր իրերից ծովի փոթորկվող ալիքները ափ են նետում միայն Սբ Մյուռոնը՝ «իր ամանով եւ ժապավենով կապած եւ զմուռսով կնքված»:

Այնպես որ հրաշքներ լինում են...

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

# Գեղանկարչուհի Մարալ Տէր-Պօղոսեան.

## Երազային ու գունազարդ Պէյրութի գովերգիչը



**Ռոլֆ Շքընիլ, «Կէօթէ» մշակութային հաստատութեան տնօրէն.**

«Իր գեղանկարներով Մարալ կը սփռէ մեր երեւակայութիւնը, մտածումներն ու կարծիքները թեւածելու, թռչելու իր տուներուն տանիքներուն եւ պատշգամին վրայէն: Ան մեզի կը յուշէ թէ կ՚ապրինք այստեղ եւ այնտեղ... անկախ իր վրձինին ճարտար ձեւի եւ գոյնի օգտագործմամբ՝ նաեւ իր հրաշալի արուեստին որպէս օրինակ»:

Ապագայ արուեստագէտը տաղանդով կը ծնի, կ՚ըսէ ժողովրդային իմաստութիւնը: Այդպէս եղաւ նաեւ հանրայայտ գեղանկարչուհի Մարալ Տէր-Պօղոսեանին համար, որ 5-6 տարեկանէն արդէն գծել ու նկարել սկսաւ: Դուստրը քանդակագործուհի Կիլէնի ու գեղանկարիչ Շահէ Տէր-Պօղոսեաններու, «Սփիւռքի մայրաքաղաք» Պէյրութի գովերգիչը իր պաստառներուն ընդմէջէն՝ շուտով ընդունուեցաւ Լիբանանի համալսարանի գեղարուեստից Ակադեմիայի գեղանկարչութեան բաժինը, միաժամանակ ստանալով Մագիստրոսի աստիճան ALBA (Academie Libanaise des Beaux Arts)-էն՝ 2004թ-ին:

Իր ստեղծագործութիւններու բանաստեղծականութիւնը, կենսաթեթեւ ու կենսախինդ գոյները, համանուագային ներդաշնակութիւնը, բացայայտ տաղանդը պատճառ դարձած է որ բազմաթիւ ցուցահանդէսներ կազմակերպուին, որոնց մասնակցած է անհատապէս թէ խմբային առումով: 2001թ-ին Վիեննայի քաղաքապետութեան հովանաւորութեամբ, իր պաստառները կը ցուցադրուին Արուեստներու ու երաժշտութեան մայրաքաղաքին մէջ, արժանանալով յատուկ ուշադրութեան ու գնահատանքի: Լիբանանի հանրապետութեան նախագահի պալատին մէջ կազմակերպուած Ազատագրութեան Օր 25 Մայիս 2000-ի ոգեկոչման նկարիչներու սիմփոզիումին առիթով, 2002թ-ին Մարալ Տէր-Պօղոսեանի գեղանկարները կը ցուցադրուին՝ բարձր գնահատուելով նոյնինքն հանրապետութեան նախագահ Էմիլ Լահուտին կողմէ: Իր առաջին անհատական ցուցահանդէսը «Կէօթէ» մշակութային կեդրոնին մէջ («Անդրադարձներ, Երազներ, Իրականութիւններ») պատճառ կը դառնան որ Մեծի Տանն Կիլիկիոյ «Կիլիկիա» թանգարանի մէջ,հովանաւորութեամբ Արամ Ա Կաթողիկոսի՝ տեղի ունենա իր երկրորդ անհատական ցուցահանդէսը:

Գեղանկարչութեան աշխարհին մէջ երիտասարդ արուեստագիտուհիին յաղթարշաւը կը շարունակուի: Ցուցահանդէսներ Տուպայի մէջ (հովանաւորութեամբ Շարժայի դրամատան), Վիեննայի արուեստի ակումբին մէջ, հովանաւորութեամբ Լիբանանի դեսպանատան (2003-2004թ.թ.): Ապա, 2002-ին, 2007-ին, 2006-ին եւ 2008-ին՝ Սուրսոքներու պալատին մէջ 27-րդ ու 28-րդ աշնանային սենեկային ցուցահանդէսներու մասնակից: 2007թ-ին կը դասախօսէ Լիբանանեան համալսարանի գեղարուեստից ակադեմիային մէջ:

Մարալին հետաքրքրութեան դաշտը, ներշնչման աղբիւրը քաղաքը եւ արուարձանն է, մասնաւորաբար Պէյրութը եւ շրջակայքը: Անոնք կը յիշեցնեն իր մանկութեան եւ պատանեկութեան երազները, ուր կը տեսնէր Պէյրութը խաղաղութեան մէջ: Այն իր անմիջական միջավայրն էր եւ ուր կազմուեցան այդ միջավայրին պատկանելիութեան զգացումները: Թէեւ ժամանակի ընթացքին քաղաքը շարունակեց փոխուիլ եւ պեթոնաշէն մեծ շէնքերը եկան գրաւելու ընդարձակ տարածութիւններ: Պեթոնը՝ քաղաքը կը հեռացնէր բնութենէն, կը փոխէր եւ կ՚այլասերէր բնութեան դիմագիծը...:

Իր պաստառները իր երազներուն իրականացումներն են, կը տեսնենք պեթոնաշէն քաղաքը իր շէնքերով, այլազան բարձրութիւններով եւ տարածքներով, որոնք այլեւս զերծ են պեթոնի առքած մռայլ, վանողական եւ անհրապոյր տեսքէն, ընդհակառակը՝ գեղեցկացած, դարձած են աննիւթական, երազային եւ ներդաշնակութեանց համադրութիւն մը:

Իր վրձինով, ընդհակառակը, քաղաքը վերածուած է լուսաւոր, կենսաթրթիռ, հարազատ եւ մարդկայնացած միջավայրի եւ այլեւս այդ քաղաքը մաս կը կազմէ բնութեան, ըլլալով անոր հմայիչ շարունակութիւնը:

Անկատար երազներ ու ծրագիրներ ունի տակաւին Լիբանանահայ արուեստագիտուհին: Կամքն ու աշխատասիրութիւնը սակայն պիտի յաղթահարէ ամէն դժուարութիւն ու փշոտ ճանապարհ՝ հասնելու վարդերով ու դափնիներով զարդարուած անդաստանը:

Բարի ճանապարհ եւ նորանոր յաջողութիւններ Մարալ Տէր-Պօղոսեանին:

ՀԱՄՕ ՄՈՍԿՈՓԵԱՆ
Պէյրութ

# Սերբական հեքիաթները՝ հայերեն



Երեւանյան «Ոսկե խասուտիկ» հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց սերբական ժողովրդական հեքիաթների մի փոքրիկ գիրք: Հեքիաթները սերբերենից թարգմանել ու գրքի համար առաջաբան է գրել գրող, թարգմանիչ, սերբագետ **Բաբկեն Սիմոնյանը**, որ տարիների ընթացքում հավաքել է դրանք՝ առանձին գրքով հրատարակելու միտումով:

Սերբական ժողովրդական հեքիաթները Բաբկեն Սիմոնյանի թարգմանությամբ ժամանակ առ ժամանակ լույս են տեսել հայ պարբերական մամուլում: Առանձին գրքով, սակայն, հայերեն լույս են տեսնում առաջին անգամ: Այդ հեքիաթները ժամանակին հավաքել ու մշակել է սերբական գրական նոր լեզվի հիմնադիր, բանասեր, բանահավաք, լեզվաբան Վուկ Կարաջիչը:

Արժե հիշատակել, որ ժողովրդական բանահյուսության արժեքավոր այդ ընտրանիի հրատարակումը 1853 թվականին առաջին անգամ սերբերենով իրականացրել են Վիեննայի Մխիթարյան միաբանության հրատարակիչները: Եվ ահա թե ինչու Մխիթարյանները: 1804 թվականին՝ սերբական առաջին ապստամբության ժամանակ, Վուկ Կարաջիչը փոխադրվել է Վիեննա, ուր մտերմացել է Մխիթարյանների հետ: Տեղեկանալով, որ Մխիթարյանները հոգեւոր գործունեությունից զատ նաեւ հրատարակչական գործունեություն են իրականացնում, Վուկ Կարաջիչը նրանց առաջարկել է տպագրել իր կազմած հանրահայտ «Սերբական բառարանը»: 1818 թվականին Մխիթարյան միաբանության տպարանում առաջին անգամ տպագրվում է Կարաջիչի բառարանը, իսկ ավելի ուշ՝ նրա շատ աշխատություններ ու կազմած գրքեր, հանդեսներ:

Սերբական ժողովրդական հեքիաթների այս փոքրիկ ընտրանիում տեղ գտած հինգ պատմվածքները ունեն իրենց բույրն ու ինքնատիպ երանգները, որոնք հիշեցնում են հայկական ժողովրդական բանահյուսության հրաշալի նմուշները: Այլաբանությամբ ու պատկերների հարստությամբ ինքնատիպ հեքիաթների այս փունջը լավ նվեր է ոչ միայն հայ մանուկներին, այլեւ մանկագիրներին:

ՌՈՒԲԵՆ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ

# Երեւանը 2012թ.-ի գրքի համաշխարհային մայրաքաղաք

Երեւանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հռչակվել է 2012 թ.-ի գրքի համաշխարհային մայրաքաղաք: Այս համատեքստում Հայաստանի մայրաքաղաքը աշխարհին հավուր պատշաճի ներկայացնելու հետ կապված հարցեր են քննարկվել Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի եւ Հրատարակիչների ազգային ասոցիացիայի պատվիրակության հանդիպման ժամանակ:

Վերջինները կարեւորել են նաեւ հատկապես երիտասարդների շրջանում գրքի տարածման եւ ընթերցասիրության մշակույթի խթանման հարցը: Ողջունելով գաղափարը, Կարեն Կարապետյանն առաջարկել է ավելի հստակ ծրագրեր ներկայացնել, որոնք բազմակողմանի վերլուծության արդյունքում կարճ ժամանակում կյանքի կկոչվեն: Հանդիպման ընթացքում մտքեր են փոխանակվել նաեւ 2012 թ.-ին համալիր միջոցառումների կազմակերպման վերաբերյալ:

**Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչություն**

# Մարզական

## Նման խաղով հավաքականն արժանի չէր պարտության



Լուսանկարը՝ ՀակԲերի

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը պարտությամբ սկսեց նոր մրցաշրջանը՝ Կիպրոսում կայացած ընկերական մրցախաղում 1-2 հաշվով զիջելով Վրաստանի ընտրանուն: Շնորհիվ ՀՖՖ-ի եւ Հանրային հեռուստատեսության, հայ ֆուտբոլասերները հնարավորություն ստացան ականատես լինելու նոր մրցաշրջանին նախապատրաստվող Հայաստանի հավաքականի անդրանիկ ելույթին: Եվ պետք է նշել, որ հայ ֆուտբոլիստների խաղը տվյալ ժամանակաշրջանի համար բավական լավ տպավորություն թողեց, ուստի կրկնակի ցավալի էր կրած պարտությունը: Հարկ է հաշվի առնել նաեւ, որ մեր հավաքականն իր մարտական կազմով խաղալու հնարավորությունից զրկված էր, քանի որ տարբեր պատճառներով բացակայում էին Ռոման Բերեզովսկին, Ռոբերտ Արզումանյանը, Կառլեն Մկրտչյանն ու Յուրա Մովսիսյանը: Հատկապես վերջինիս բացակայությունը զգացնել տվեց:

Իհարկե, ընկերական հանդիպումներում հաճախ արդյունքը հետին պլան է մղվում: Առաջնայինը ֆուտբոլիստների խաղային որակներն են, համագործակցությունը խաղադաշտում: Այս առումով մեր հավաքականի խաղը բավական հաճելի տպավորություն թողեց: Աչքի էին զարնում մեկ հպումով արագ ու ճշգրիտ կատարված փոխանցումները, կոմբինացիոն խաղը: Կատարված հարվածների թվով էլ մեր ֆուտբոլիստները զգալիորեն գերազանցեցին մրցակցին: Միայն ցավոք, որ դրանք նպատակին չհասան: Գրոհների վերջնամասում էլ մերոնք ոչ միշտ էին նպատակասլաց գործում ու ճիշտ շարունակություն գտնում: Հենց դրա պատճառով ունենալով խաղային զգալի առավելություն, ավելի շատ տիրելով գնդակին, մեր ֆուտբոլիստներն այդպես էլ չկարողացան խաղային իրադրությունից գրավել մրցակցի դարպասը:

Խաղը ցույց տվեց, որ մեր պաշտպանական օղակում առայժմ լուրջ խնդիրներ կան լուծելու, մանավանդ որ բացակայում էր կենտրոնական պաշտպան Ռոբերտ Արզումանյանը: Հենց պաշտպանների ու դարպասապահ Կասպարովի ոչ հստակ խաղի հետեւանքով դեռեւս առաջին խաղակեսին Ալեքսանդր Իաշվիլին ու Դավիթ Սիրաձեն գրավեցին մեր հավաքականի դարպասը:

Ընդմիջումից հետո մեր ընտրանին դրսեւորեց իր իրական ներուժը, ցուցադրեց այն խաղը, որին ունակ է: Գրեթե ողջ 2-րդ խաղակեսը վրացիները ստիպված էին պաշտպանվել ու հետ մղել մեր ֆուտբոլիստների անընդմեջ գրոհները: Առջեւի գծում լավ էին համագործակցում Հենրիխ Մխիթարյանը, Մարկոսը, Էդգար Մանուչարյանն ու Գեւորգ Ղազարյանը: Նրանք գոլային մի քանի լավ պահեր ստեղծեցին, սակայն միայն մեկ անգամ գնդակը հայտնվեց վրացիների դարպասում: Հենրիխ Մխիթարյանին վայր գցելու համար նշանակված 11 մ հարվածը հստակ իրացրեց Մանուչարյանը:

Իհարկե, պարտությունը, այն էլ նման լավ խաղի պայմաններում, կրկնակի ցավալի է: Սակայն չպետք է վհատվել ու շարունակել նախապատրաստությունը ՌԴ հավաքականի հետ վճռորոշ հանդիպմանը: Համոզված ենք, որ մեր հավաքականն ունակ է շարունակելու հաղթարշավը Եվրո-2012-ի ընտրական մրցաշարում:

Վրաստանի հավաքականի հետ խաղում մեր ընտրանին հանդես եկավ հետեւյալ կազմով. **Գեւորգ Կասպարով, Լեւոն Հայրապետյան, Հրայր Մկոյան, Սարգիս Հովսեփյան, Արարատ Առաքելյան (Արթուր Յուզբաշյան, 46), Արտակ Եդիգարյան, Մարկոս, Էդգար Մալաքյան, Էդգար Մանուչարյան (Արտակ Ալեքսանյան, 84), Հենրիխ Մխիթարյան, Գեւորգ Ղազարյան**:

## Զաուեռլանդը հավատում է Արթուր Աբրահամի հաջողությանը

**Ինչպես հայտնի է, փետրվարի 12-ին Արթուր Աբրահամը 10-ռաունդանոց մարզումային մենամարտ է անցկացնելու սերբ բռնցքամարտիկ Ստեֆան Բոժիչի հետ: Sauerland Event պրոմոութերական ընկերության ղեկավարներից մեկը՝ Կալե Զաուեռլանդը գերմանական Spox.de կայքին տված հարցազրույցում խոսել է նաեւ Արթուր Աբրահամի մասին, որը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:**

**Հելսինկիում Արթուրի ելույթը մեզ շատ հիասթափեցրեց: Սակայն օրերս Արթուրի հետ ունեցած հեռախոսազրույցից հետո վստահ եմ, որ նա հավաքել է իրեն եւ ամեն ինչ հսկողության տակ է պահում: Նա երազում էր ԱՄՆ-ում «աստղ» դառնալ, բարեկեցիկ կյանքով ապրել: Մենք նրան տվեցինք երազանքն իրականացնելու հնարավորություն: Այժմ նա հասկանում է, որ քաղցր կյանքն ու ծանր աշխատանքն այնքան էլ հաջողությամբ չեն զուգորդվում: Արթուրը հասկացել է, որ համաշխարհային մակարդակի բռնցքամարտիկների շարքում տեղ ունենալու համար պետք է շատ աշխատի:**



**Նախկինում նա տարեկան 3-4 մենամարտ էր անցկացնում: Սակայն Super Six մրցաշարի պատճառով այդ հաճախականությունը խախտվեց, ինչն էլ երեւի սեփական ուժերի նկատմամբ Արթուրի վստահության կորստի պատճառ դարձավ: Դիրելի եւ Ֆրոչի հետ մենամարտերի միջեւ ընկած մեծ ժամանակահատվածը անհաջողությունների պատճառ դարձավ: Ուստի Անդրե Ուորդի հետ մենամարտից առաջ որոշեցինք մարզումային մրցամարտ կազմակերպել Ստեֆան Բոժիչի հետ:**

**Ուորդի հետ մենամարտն Արթուրի համար շատ դժվար կլինի: Սակայն Աբրահամը մեկ անգամ չէ ցույց տվել, թե ինչպես կարելի է դժվարին կացությունից դուրս գալ ու բարձունքներ նվաճել: Մայիսին Ուորդի հետ կայանալիք մենամարտը պետք է Արթուրին խթանի ավելի մեծ ծանրաբեռնվածությամբ մարզվել: Բացի այդ էլ, Ուորդի մարտաոճն Արթուրի համար ավելի հարմար է, քան Ֆրոչինն էր:**

**Սակայն այժմ մեզ բոլորիս անհրաժեշտ է կենտրոնանալ Բոժիչի հետ մենամարտի վրա: Բոլորը սկսել են խոսել Ուորդի հետ կայանալիք կիսաեզրափակիչ մենամարտի մասին, մինչդեռ շաբաթ օրը չպետք է նույնիսկ նվազագույն վրիպում թույլ տալ: Մենք մտածում ենք միայն հաղթանակի մասին: Այլ արդյունքը մեզ համար իսկական աղետ կլինի: Այնպես որ հարկավոր է յուրաքանչյուր քայլ կշռադատված կատարել:**

## ՖԻՖԱ-ն քննադատության թիրախ

**Եվրոպական ֆուտբոլային ակումբների ընկերակցությունը Ժնեւում կայացած ամենամյա համաժողովում խստորեն քննադատել է ՖԻՖԱ-ին՝ սպառնալով «սառը պատերազմ» հայտարարել, եթե իրենց պահանջներին ուշադրություն չդարձվի: Մասնավորապես նշվել է, որ ՖԻՖԱ-ն առանց հաշվի առնելու ակումբների շահերը, մտադիր էր 2022-ի աշխարհի առաջնությունը Քաթարում անցկացնել ձմռանը: Նաեւ դժգոհության տեղիք է տալիս 2012-ի ֆուտբոլի Եվրոպայի առաջնության եւ Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերի միջեւ կարճ ժամկետը: Չէ՞ որ եվրոպական ակումբների առաջատար ֆուտբոլիստներին հարկ կլինի Եվրոպայի առաջնությանը մասնակցելուց ընդամենը մի քանի շաբաթ անց կրկին մրցասպարեզ դուրս գալ Լոնդոնի օլիմպիադայում:**

**Դժգոհության տեղիք է տվել նաեւ այս տարվանից միջազգային խաղերի խաղացանկում լրացուցիչ օրեր ընդգրկելու ՖԻՖԱ-ի ինքնակամ որոշումը: Դրանք նախատեսված են ընկերական հանդիպումների անցկացման համար: Դա լրացուցիչ դժվարություններ կստեղծի ազգային առաջնությունների խաղացանկերի կազմման ժամանակ:**

**«Դուք չեք հանդիպի որեւէ մարզչի, որն ուրախ է փետրվարի 9-ին անցկացվող ընկերական հանդիպումների համար: Նման խաղերի պատճառով ակումբների տրամադրության տակ քիչ ֆուտբոլիստներ են մնում: Իսկ չէ՞ որ առաջիկա հանգստյան օրերին ազգային առաջնություններում հերթական խաղերն են կայանալու: Հաջորդ շաբաթ էլ վերսկսվելու են չեմպիոնների լիգայի հանդիպումները: Մենք արդեն հասկացել ենք, որ ՖԻՖԱ-ն սովորել է փոփոխել խաղացանկն իր հայեցողությամբ: Մեծ սխալ էր փետրվարի 9-ին ընկերական խաղերի անցկացումը», նշել է եվրոպական ֆուտբոլային ակումբների ընկերակցության փոխնախագահ, «Միլանի» տնօրեն Ումբերտո Գանդինին:**

### ՇԱԽՄԱՏ

## Էլինան հաստատում է իր բարձր կարգը



**Իտալիայում ընթացող շախմատի մրցաշարում իր գերազանց ելույթներն է շարունակում Էլինա Դանիելյանը՝ տոնելով 4-րդ անընդմեջ հաղթանակը: Էլինայի «զոհն» այս անգամ գրոսմայստեր Իվան Սոկոլովն էր: Էլինան ապացուցում է, որ իզուր չի կրում նաեւ տղամարդկանց միջազգային գրոսմայստերի բարձր կոչումը, ինչը շախմատիստուհիներից քչերին է հասանելի: 4 տուրից հետո Դանիելյանը Ալեքսեյ Դրեեւի, Դավիթ Ալբերտոյի եւ Գույդո Կապրիոյի հետ հարյուր տոկոսանոց արդյունքով գլխավորում է աղյուսակը:**

**4-րդ տուրում Դրեեւը հաղթեց Օլեգ Ռոմանիշինին, Դավիթ Ալբերտոն առավելության հասավ Ֆեդերիկո Մանչայի նկատմամբ, իսկ Գույդոն պարտության մատնեց Մանուել Լեոնին: 5-րդ տուրում մեծ հետաքրքրությամբ է սպասվում Դանիելյանի մրցավեճը ռուսաստանցի գրոսմայստեր Ալեքսեյ Դրեեւի հետ, որի վարկանիշը (2694) 240-ով բարձր է Էլինայի անհատական գործակցից (2454):**

**Հրայր Սիմոնյանը ոչ-ոքի ավարտեց պարտիան Գորան Ուրոշեւիչի հետ եւ 2,5 միավորով տեղ զբաղեցրեց 27-րդ հորիզոնականում: 5-րդ տուրում նրա մրցակիցը կլինի Սերգեյ Գրոմովը:**

## «Աերոֆլոտի» շախմատային փառատոնը մեկնարկեց

**Մոսկվայում մեկնարկել է արդեն ավանդական դարձած շախմատի «Աերոֆլոտի» 10-րդ մրցաշարը, որն անցկացվում է «Իզմայլովո» տուրիստական համալիրի «Գամմա-Դելտա» հյուրանոցում: Շվեյցարական մրցակարգով, 9 տուրով անց են կացվում 3 մրցաշարեր, որոնց մասնակիցների թվում են ինչպես Հայաստանի շախմատիստները, այնպես էլ այլ երկրները ներկայացնող հայազգի մեր ներկայացուցիչները:**

**Ուժեղագույնների՝ A կարգի մրցաշարին թույլատրում են մասնակցել 2549-ից բարձր անհատական վարկանիշ ունեցող շախմատիստներին: Այս մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 67 հազար եվրո է, որը բաշխվելու է 30 մասնակիցների միջեւ համապատասխան գրաված տեղի: Մրցաշարի հաղթողը կպարգեւատրվի 20 հազար եվրոյով, 2-րդ մրցանակակիրը՝ 10 հազար, 3-րդը՝ 7 հազար եվրոյով: Ամենացածր պարգեւավճարը 500 եվրոն է, որը կստանա 21-30-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստներից յուրաքանչյուրը:**

**A խմբի մրցաշարին մասնակցում են 86 շախմատիստներ, որոնցից 3-ը ներկայացնում են Հայաստանը: Մեր եռյակից հաղթանակով մեկնարկեց միայն գրոսմայստեր Տիգրան Պետրոսյանը՝ պարտության մատնելով ռուսաստանցի Նիկիտա Վիտյուգովին: Սերգեյ Մովսիսյանը հաշտություն կնքեց չինացի Յու Յանգյիի հետ: Ոչ-ոքի ավարտվեց նաեւ Ավետիք Գրիգորյանի մրցավեճը մոլդովացի Վիկտոր Բոլոգանի հետ: Ընդ որում այդ պարտիան ավարտվեց վերջինը: Մրցակիցները հաշտության ձեռք մեկնեցին միայն 99-րդ քայլին:**

**Ուժեղագույնների մրցաշարին մասնակցում է նաեւ բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը, որը ոչ-ոքի խաղաց Ալեքսանդր Խալիֆմանի հետ:**

**B խմբի մրցաշարին մասնակցում են 2300-ից 2549 վարկանիշ ունեցող 196 շախմատիստներ: Հայաստանը ներկայացնում են 6 շախմատիստներ: Նրանցից միայն Սուրեն Պողոսյանին հաջողվեց մեկնարկում հաղթանակ տոնել՝ առավելության հասնելով Ալեքսանդր Կրապիվինի նկատմամբ: Պավել Սմիրնով-Տիգրան Քոթանջյան, Մելիքսեթ Խաչիյան-Հովհաննես Գաբուզյան, Դավիթ Պետրոսյան-Լեւ Դենիսով պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Հովիկ Հայրապետյանը պարտվեց Բայարսայխան Գունդավային, Վահե Բաղդասարյանը զիջեց Ազատ Շարաֆիեւին:**

**Բացի ԱՄՆ-ում բնակվող Մելիքսեթ Խաչիյանից, B մրցաշարին մասնակցում են նաեւ Ռուսաստանը ներկայացնող 3 հայ շախմատիստներ, որոնք բոլորն էլ հաղթանակով մեկնարկեցին: Արթուր Գաբրիելյանը հաղթեց Վլադիմիր Համիտեւիչին, Նիկիտա Մատինյանն առավելության հասավ Պյոտր Կորոբկովի նկատմամբ, իսկ Պողոս Նահապետյանը պարտության մատնեց Յուլիա Կոչետկովային:**

**B խմբի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 37500 եվրո է, որը բաշխվելու է 35 մասնակիցների միջեւ: Հաղթողը կստանա 10 հազար եվրո, 2-րդ տեղը զբաղեցրած շախմատիստը՝ 6 հազար, 3-րդը՝ 3500 եվրո: Նվազագույն պարգեւավճարը 300 եվրո է (26-35-րդ տեղերը գրավածների համար):**

**C խմբի մրցաշարին մասնակցում են 2300-ից ցածր վարկանիշ ունեցող 106 շախմատիստներ: Մրցանակային ընդհանուր հիմնադրամը 18 հազար եվրո է, որը նախատեսված է 35 մասնակիցների համար: Հաղթողը կպարգեւատրվի 3500 եվրոյով, 2-րդ եւ 3-րդ մրցանակակիրները՝ համապատասխանաբար 2300 եւ 1500 եվրոյով: Նվազագույն պարգեւը 200 եվրո է (26-35-րդ տեղերի համար):**

**Հայաստանն այս մրցաշարում ներկայացնում են 9 շախմատիստներ: Նրանցից յոթը՝ Դավիթ Շահինյանը, Տիգրան Սիմոնյանը, Սարգիս Մանուկյանը, Արթուր Ղարագյոզյանը, Մարկ Բասենցյանը, Արամ Պլուզյանը եւ Մանուել Պետրոսյանը հաղթանակով մեկնարկեցին: Վահագն Խաչատրյանն ու Վարդան Խոջայանը պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի: Նշենք, որ վանաձորցի Դավիթ Շահինյանը գերազանց էր հանդես եկել նախորդ տարվա մրցաշարում՝ 9 հնարավորից վաստակած 7,5 միավորով արժանանալով գլխավոր մրցանակին՝ 2000 եվրո պարգեւավճարի: Իսկ մինչ այդ պատանի շախմատիստը 8,5 միավորով դարձել էր մոսկովյան մեկ այլ մրցաշարի հաղթող՝ ցույց տալով լավագույն արդյունքը շախմատային փառատոնի ավելի քան 1000 մասնակիցների մեջ:**

## Լեգեոնականները պայմանագրեր կնքեցին

**«Ժեմչուժինա-Սոչի-2» թիմի 17-ամյա հարձակվող Տիգրան Տիգրանյանը «Իմպուլսում» հաջող փորձաշրջան անցնելուց հետո եռամյա պայմանագիր է կնքել ակումբի հետ: Ավելի վաղ դիլիջանցիների կազմում պաշտոնական գրանցում էր ստացել բելառուս Ռոման Հարկուշան: Իսկ ահա բրազիլացի Սաբինոն եւ վերջերս «Փյունիկից» տեղափոխված Արթուր Բարսեղյանը կշարունակեն փորձաշրջանը «Իմպուլսում»: Այսօր թիմն ուսումնամարզական հավաքի է մեկնում Կիպրոս, որտեղ մինչեւ փետրվարի 24-ը նախատեսված է ստուգողական 3 հանդիպում անցկացնել:**

## «Արարատի» հաղթանակով

**Նոր մրցաշրջանին նախապատրաստվող «Արարատի» ֆուտբոլիստները ստուգողական խաղում 3-2 հաշվով պարտության մատնեցին 1-ին խմբում հանդես եկող «Իմպուլս-2»-ին: Արարատցիներից գոլերի հեղինակներ դարձան Գեւորգ Կարապետյանը, Արա Հովհաննիսյանը եւ Ադամ Յաուն: Սեւամորթ այս ֆուտբոլիստը ներկայումս փորձաշրջան է անցնում թիմում:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Ծանուցում

## Համաշխարհային հայկական կոնգրեսը եւ Ռուսաստանի հայերի միությունը ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ հայտարարում են 2011թ. ստեղծագործական եւ գիտական աշխատանքի միջազգային

# ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

**Վաղուց արդեն բարի ավանդույթի է վերածվել Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության կողմից անցկացվող գիտական եւ ստեղծագործական աշխատանքների ամենամյա մրցանակաբաշխությունը: Այն կազմակերպվում եւ անց է կացվում համրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի, գրողների, ժուռնալիստների, նկարիչների, կոմպոզիտորների միությունների հետ համատեղ: «Մրցանակաբաշխություն-2011»-ը նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյա հոբելյանին: Մրցանակաբաշխության հիմնական նպատակն է՝ նպաստել Հայաստանի գիտական եւ ստեղծագործական մտավորականության գործունեության ակտիվացմանը, աջակցել երկրի մտավոր կյանքի աշխուժացմանը:**

**«Մրցանակաբաշխություն-2011»-ին, իբրեւ պարտադիր պայման կարող են մասնակցել միայն մտավորականության երիտասարդ /մինչեւ 35 տարեկան/ ներկայացուցիչները, իսկ գրողների եւ լրագրողների կողմից մրցանակաբաշխության ներկայացված ստեղծագործություններն ու հրապարակումները պետք է արտացոլեն ժամանակակից երիտասարդության կերպարը, նրանց առաջնահերթություններն ու խնդիրները, տեղն ու դերը Հայաստան երկրի կայացման, Հայրենիք-Սփյուռք կապերի առավել սերտացման ասպարեզում:**

**«Մրցանակաբաշխություն-2011»-ը համահայկական նշանակություն ունեցող միջոցառում է, որին կարող են մասնակցել Ղարաբաղի, ինչպես նաեւ հայկական սփյուռքի մտավորականության ներկայացուցիչները: Այն անց է կացվում ՀՀ կրթության եւ գիտության, ՀՀ մշակույթի նախարարությունների հետ համագործակցությամբ եւ նրանց աջակցությամբ:**

**Մրցանակաբաշխության ընդհանուր ֆոնդը կազմում է 32 միլիոն դրամ:**

## Մրցանակաբաշխության պայմանները

### Գիտնականների համար

«Լավագույն գիտական աշխատանք» մրցույթին կարող են մասնակցել մինչեւ 35 տարեկան երիտասարդ գիտնականները: Սահմանված են մրցանակներ 14 անվանակարգերում.

-ֆիզիկա
-մաթեմատիկա եւ մեխանիկա
-տեխնիկական գիտություններ
-քիմիա
-կենսաբանություն
-պատմություն
-սոցիոլոգիա
-քաղաքագիտություն եւ իրավագիտություն
-երկրաբանություն
-արվեստ, լեզու եւ գրականություն
-արեւելագիտություն
-տնտեսագիտություն
-հայագիտություն եւ ազգագրություն

Մրցանակային ընդհանուր ֆոնդը կազմում է 10 միլիոն դրամ:

Մրցանակակիրները կպարգեւատրվեն մինչեւ 700 հազար դրամ դրամական պարգեւներով եւ կարժանանան ՀՀ ԳԱԱ, ՀՀԿ եւ ՌՀՄ պատվավոր դիպլոմների: Մրցույթին կարող են ներկայացվել միայն 2008-2009-ին հրատարակված գիտական հոդվածների շարքը եւ մենագրությունները, կամ արտոնագրված աշխատանքները:

Ներկայացվող փաստաթղթերի փաթեթը պետք է ներառի այն կազմակերպության գիտական խորհրդի որոշումը, որտեղ աշխատում է հայտատուն: Փաստաթղթերը կարող են ներկայացվել նաեւ տվյալ բնագավառում գործող որեւէ այլ կազմակերպության գիտական խորհրդի կողմից: Մրցույթի արդյունքները կիրապարակվեն 2011թ-ի ապրիլ ամսին:

Ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեւերը կարելի է ստանալ ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» գրասենյակից, կամ Հիմնադրամի կայքի միջոցով՝ http://sdfund.sci.am:

Հասցեն՝ 0019, Մարշալ Բաղրամյանի պող. 24, Երեւան, Հայաստանի հանրապետություն:

Հեռ. +37410 527530, +37410 527031

### Գրողների համար

Մրցանակաբաշխությունը կանցկացվի «Արդի հայ արձակ. 21-րդ դար» թեմայով հետեւյալ անվանակարգերում՝

-վեպ
-վիպակ
-պատմվածաշար

Կանոնակարգի համաձայն, մրցույթին առաջարկվող երկերը գնահատվում են գեղարվեստական մակարդակի ու թեմաների այժմեականության եւ ինքնատիպության, ինչպես նաեւ բարոյափիլիսոփայական եւ հոգեւոր արժեհամակարգի տեսանկյուններից:

Այս տարի, իբրեւ պարտադիր պայման, մրցանակային ստեղծագործությունները պետք է արտացոլեն ժամանակակից երիտասարդության կերպարը, հիմնախնդիրները, նրա տեղն ու դերը մեր երկրի կայացման գործում:

Բոլոր տեքստերը պետք է լինեն անտիպ եւ ներկայացվեն ծածկանունով: Մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի, այնպես էլ սփյուռքի գրողները:

Մրցանակային ֆոնդը կազմում է 5,5 միլիոն դրամ:

Նախատեսված են հետեւյալ մրցանակները

▼ Վեպի համար /նվազագույն ծավալը՝ 80 համակարգչային էջ/ -2 միլիոն դրամ

▼ Վիպակի համար /նվազագույն ծավալը՝ 50 համակարգչային էջ/ -1,5 միլիոն դրամ

▼ Պատմվածաշարի համար /մինչեւ 40 համակարգչային էջ/ -1,5 միլիոն դրամ:

Բոլոր նյութերը անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Գրողների միություն, աշխատակազմի ղեկավարին՝ մինչեւ 2011-ի սեպտեմբերի 1-ը:

Հասցե՝ Երեւան, Մարշալ Բաղրամյան 3:

Հեռախոս՝ 56-18-31:

### Նկարիչների համար

Հայ կերպարվեստի զարգացմանը նպատակաուղղված կերպարվեստի լավագույն ստեղծագործությունների մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Նկարիչների միության անդամները, որոնց տարիքը 2011-ի դրությամբ չի գերազանցում 35-ը:

Մրցանակային ֆոնդը կազմում է 5,5 միլիոն դրամ:

Սահմանված են հետեւյալ մրցանակները.

1. Գեղանկարչություն - 5 մրցանակ՝ յուրաքանչյուրը՝ 500 հազար դրամ
2. Քանդակ - 2 մրցանակ յուրաքանչյուրը՝ 400 հազար դրամ
3. Գրաֆիկա- 2 մրցանակ յուրաքանչյուրը՝ 250 հազար դրամ
4. Դեկորատիվ կիրառական արվեստ - 1 մրցանակ- 300 հազար դրամ

Մրցանակային ֆոնդի 25% կտրամադրվի ցուցահանդես-մրցույթի կազմակերպման եւ ներկայացված գործերի կատալոգի հրատարակման համար:

Մրցույթային հանձնաժողովը իրավասու է մրցանակային ֆոնդը բաշխել այլ կերպ, ըստ փաստացի ներկայացված աշխատանքների որակի եւ ճյուղերի: Աշխատանքները ներկայացնել Հայաստանի նկարիչների միություն՝ 2011-ի հունիսի 25-ից մինչեւ հուլիսի 1-ի ժամը 16-ը:

Հասցե՝ Երեւան, Աբովյան 16:

Հեռախոս՝ +374 10 56-47-24, 56-48-53

### Կոմպոզիտորների եւ երաժշտագետների համար

Լավագույն կոմպոզիտորական եւ երաժշտագիտական ստեղծագործությունների մրցույթին կարող են մասնակցել ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում ապրող երիտասարդ /մինչեւ 35 տարեկան/ հայ կոմպոզիտորներ եւ երաժշտագետներ, ովքեր ունեն պրոֆեսիոնալ երաժշտական կրթություն:

Մրցանակային ֆոնդը կազմում է 5,5 միլիոն դրամ:

### Կոմպոզիտորական արվեստի ասպարեզում՝

«Հայ ժամանակակից կոմպոզիտորական արվեստի ստեղծագործական ձեռքբերում» ճյուղում ներկայացվում են ստեղծագործություններ, գրված հետեւյալ ժանրերում.

ա. Վոկալ-սիմֆոնիկ, կոնցերտային երաժշտության ժանրում գրված ստեղծագործություն /15-20 րոպե/ -մրցանակային ֆոնդը՝ 1 միլիոն 280 հազար դրամ

բ. Գործիքային անսամբլների համար /դուետ, տրիո, կվարտետ եւ այլն/ գրված սեղծագործություն /12-15 րոպե/ -մրցանակային ֆոնդը՝ 1 միլիոն 100 հազար դրամ

գ. Խմբերգային, վոկալ-գործիքային երաժշտության ժանրում գրված ստեղծագործություն /8-10 րոպե/ -մրցանակային ֆոնդը՝ 750 հազար դրամ

### Երաժշտագիտության բնագավառում՝

«Հայ երաժշտության զարգացման նոր հեռանկարներ» անվանակարգում ներկայացվում են՝ գիտական հոդվածների ժողովածու, երաժշտական հրապարակախոսություն, մենագրություն: Մրցանակային ֆոնդը՝ 900 հազար դրամ:

Մրցանակի արժանացած ստեղծագործությունների կատարման կազմակերպման, ինչպես նաեւ մրցույթի կազմակերպման այլ ծախսերի համար կօգտագործվի մրցանակային ընդհանուր ֆոնդի 25%:

Երաժշտագիտական աշխատություններն ընդունվում են հրատարակված օրինակի տեսքով;

Կոմպոզիտորական ստեղծագործություններն ընդունվում են համակարգչային շարվածքի եւ/ կամ բավարար ընթեռնելի ձեռագրի տեսքով:

Կարող են ներկայացվել նաեւ ստեղծագործական ձայնագրություններ՝ եթե այդպիսիք առկա են:

Յուրաքանչյուր հեղինակից ընդունվում է մեկ գործ՝ մեկ անվանակարգում:

Մրցույթին չեն կարող ներկայացվել նախկինում մրցանակ շահած գործեր: Աշխատանքներն ընդունվում են մինչեւ 2011-ի մայիսի 31-ը՝ Հայաստանի Կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության քարտուղարությունում:

Հասցե՝ Երեւան, Դեմիրճյան 25:

Հեռ.՝ 52-47-02

### Լրագրողների համար

Լրագրողական լավագույն հրապարակումների մրցույթ՝ «Երիտասարդությունն է Հայաստանի Հանրապետության հույսը, հայության ապագան» թեմայով:

Մրցույթին ներկայացվող նյութերը պետք է արտացոլեն հայ երիտասարդության առաջնահերթություններն ու խնդիրները՝ Հայաստանի Հանրապետության պետականության ամրապնդման, երկրի պաշտպանունակության հզորացման, Հայրենիք-Սփյուռք կապերի առավել սերտացման ասպարեզում:

Հրապարակումների հերոսը ժամանակակից հայ երիտասարդությունն է՝ հայրենանվեր իր գործունեությամբ, նպատակներով, երազանքներով ու մտահոգություններով, տարբեր՝ տնտեսության, գիտության, մշակույթի, կրթության եւ այլ ոլորտներում ունեցած ներդրումներով:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի եւ Սփյուռքի լրատվամիջոցները, Հայաստանի ժուռնալիստների միության անդամները:

Մրցանակային ֆոնդը կազմում է 5,5 միլիոն դրամ:

Սահմանվում են հետեւյալ մրցանակները.

1. Պարբերական մամուլ - երկու մրցանակ՝ 750 հազարական դրամ
2. Հեռուստահաղորդումներ - երկու մրցանակ՝ 550 հազար-ական դրամ
3. Ռադիոհաղորդումներ - մեկ մրցանակ՝ 360 հազար դրամ
4. Ցանցային ԶԼՄ-ներ - մեկ մրցանակ՝ 360 հազար դրամ
5. Սփյուռքահայ մամուլ - մեկ մրցանակ՝ 360 հազար դրամ

Սահմանվում են նաեւ 3 մրցանակ Ռուսաստանի հայերի միության Հայաստանում ծավալված գործունեության լավագույն լուսաբանման համար:

1. Պարբերական մամուլ - մեկ մրցանակ՝ 360 հազար դրամ
2. Հեռուստահաղորդումներ - մեկ մրցանակ՝ 360 հազար դրամ
3. Ռադիոհաղորդումներ - մեկ մրցանակ՝ 360 հազար դրամ

Նյութերի ներկայացման վերջին ժամկետը 2011թ. օգոստոսի 31-ն է: Մրցույթի արդյունքները կիրապարակվեն 2011թ. սեպտեմբերին:

Մրցույթի նյութերն ուղարկել կամ անձամբ ներկայացնել Հայաստանի ժուռնալիստների միություն:

Հասցե՝ Պուշկինի 3ա, հեռ. 56-12-76:

***Ծանոթություն***

Մրցույթներն անցկացնող կազմակերպությունները կարող են մրցույթի կազմակերպչական ծախսերի համար օգտագործել մրցանակային ֆոնդի մինչեւ 10 տոկոսը, իսկ Կոմպոզիտորների եւ երաժշտագետների միությունը, Նկարիչների միությունը, ելնելով մրցույթի կազմակերպման հետ առնչվող ոլորտի առանձնահատկություններից, մինչեւ՝ 25 տոկոսը:


ECONOMICS & LAW CENTRE

«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

▼ **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն**

▼ **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*


**ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է «Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ին՝ արդյունաբերական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 3,0 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության գործունեության ժամկետի երկարաձգման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ., փետրվարի 16-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

***ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 9.2.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: